ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-Ն: ՀԱՍՑԵ՝ ք. ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32: ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2: Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 2000:

ISSN 1829-3468

Սյունյաց երկիր

ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ

Գինը՝ 100 դրամ:

ՇԱԲԱԹ 5 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2013Թ • № 26 (299)

www.syuniacyerkir.am

Եվ փխրության է նման այս աշնան բերած խնդությունն իսկ...

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

Անօգուտ փվայտանք՝ Սյունիքին փաթաթված կլանի գոյությունը լեգիտիմացնելու համար

ԱՐԵՎԵԼՔ

Այս անգամ եւս ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի սյունիքյան այցը կառուցվեց Մաքսիմ Հակոբյանի բստրած սխեմային ճիշտ համապատասխան: Սեպտեմբերի 25-26-ին Սերժ Սարգսյանը եղավ այն վայրերում ու մասնակցեց այն միջոցառումներին, որոնք (բացառությամբ Կապանի N2 ավագ դպրոցի կառուցվող շենքի եւ Սիսիանի տրիկոտաժի արտադրամասի) ուղղակիորեն առնչվում են մաքսիմյան կլանին: Նախագահն, ըստ էության, շարունակում է Հայաստանի ամենաշահութաբեր ձեռնարկությանն առավելագույնս մոտ կանգնած լինելու՝ ի սկզբանե որդեգրած քաղաքականությունը, եւ ամբողջ Սյունիքին ու սյունեցիներին բացառապես նայում է մաքսիմյան ակնոցներով: Պատահական չէ, որ նախագահի սյունիքյան հերթական տուրնեն մարզում անմիջապես ստացել է այլ գնահատական՝ այց, որը կապ չունի իրական Սյունիքի ու սյունեցիների հետ, այց, որն անօգուտ տվայտանք է՝ մարզին փաթաթված կլանի գոյությունը լեգիտիմացնելու եւ արդարացնելու համար:

ՀՀ նախագահի այցը համապատասխանեցվել է (ժամանակի առումով) N38 ընտրատարածքում սեպտեմբերի 29-ին կայանալիք լրացուցիչ ընտրության հետ: Այս տարվա փետրվարի 18-ին Կապանը, նաեւ Քաջարանը «ոչ» էին ասել Սերժ Սարգսյանին: Կապանի որոշ տեղամասեր (օրինակ՝ Ձորքի երկու տեղամասում) Սերժ Սարգսյանին ավելի դաժան էին մերժել, քան հանրապետության որեւէ այլ տեղամասում: Նաեւ այդ է պատճառը, որ մաքսիմյան կլանն առաջիկա ընտրությունների առիթով խուճապի մեջ է, ինչի համար կլանի պարագլուխն անձամբ է ստանձնել ՀՀԿ-ից պատգամավորի թեկնածու Արմեն Կարապետյանի նախընտրական շտաբի պետի պաշտոնը եւ այցելում է համայնքներ, անհասկանալի հայերենով ընտրողներին նորանոր խոստումներ տալիս: Մյուս կողմից՝ Մաքսիմ Հակոբյանը կամենում է ապացուցել, որ ինքն ի վիճակի է առանց Սուրեն Խաչատրյանի ՀՀԿ թեկնածուի հաղթանակն ապահովել: Նախկինում, մինչդեռ, այլ իրավիճակ էր՝ սյունիքյան քաղաքական դաշտի բոլոր ձախողումները Մաքսիմ Հակոբյանը, 30 արծաթի զորությամբ, հեշտությամբ բարդում էր մարզպետի վրա: Հիմա, բնականաբար, ձախողման պատասխանատվությունը, եթե դա տեղի ունենա, ընկնելու է միայն ու միայն իր վրա: Եվ նախագահի սույն այցը Մաքսիմ Հակոբյանին՝ վերջնականապես քաղաքական դիակ դառնալուց փրկելու առաքելություն ուներ նաեւ...

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
26.09.2013

Պլատոնն իմ բարեկամն է, բայց...

Դիտարկումներ Մեղրի-Երեւան ավտոմայրուղում տեղի ունեցած միջադեպի վերաբերյալ

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Մեղրի-Երեւան ավտոմայրուղու Լիճք-Տաշտուն գյուղերի խաչմերուկում սեպտեմբերի 25-ին տեղի ունեցած միջադեպի մասին, ըստ էության, գիտեն ոչ միայն Հայաստանում ու Ռուսաստանում: Միջադեպը հնչեղություն ստացավ առաջին իսկ րոպեներից՝ ԱԺ պատգամավոր Զարուհի Փոստանջյանի հայտարարությունների, ինչպես նաեւ ոստիկանությանը ներկայացրած հաղորդման շնորհիվ: Այնուհետեւ տարածվեց «Ժառանգություն» կուսակցության պաշտոնական հայտարարությունը, որում, գրեթե առանց փոփոխության, ամրագրվեցին պատգամավորի՝ ավելի վաղ արված հայտարարությունների դրույթները: Տեղի ունեցածին, առանց հապաղելու եւ առանց կատարվածի իսկությունը ճշտելու, արձագանքեցին ԱԺ պատգամավորներ, հասարակական-քաղաքական գործիչներ, լրատվամիջոցներ: Բոլորն էլ, կարծեք, պատգամավորի հայտարարությունները միահամուռ ընդունեցին իբրեւ անհերքելի ճշմարտություն:

Սյունիքյան հանրությունը, մինչդեռ, ոչ միանշանակ է ընդունել Մեղրի-Երեւան ավտոմայրուղում տեղի ունեցած միջադեպի մեկնաբանություններն ու «Ժառանգության» գնահատականները: Ավելին, կան նույնիսկ միանգամայն տարաբեւեռ բացատրություններ ու դիտարկումներ:

Եղելության վերաբերյալ սեփական պատկերացում ունենալու համար էլ հանդիպեցինք միջադեպի մյուս մասնակիցների, սահմանապահ զորամասի ու ոստիկանության ներկայացուցիչների հետ:

Միջադեպը՝ ըստ պատգամավորի եւ «Ժառանգություն» կուսակցության

Ինչպես արդեն նշեցինք, միջադեպի առաջին իսկ րոպեներից ԱԺ պատգամավոր Զարուհի Փոստանջյանը հնչեցրել է հայտարարություններ, տվել գնահատականներ եւ ներկայացրել տեղի ունեցածի իր ընկալումն ու բացատրությունը: Ավելի ուշ հայտարարությամբ հանդես է եկել «Ժառանգություն» կուսակցությունը:

Եվ, ուրեմն, ի՞նչ է տեղի ունեցել սեպտեմբերի 25-ին Մեղրի-Երեւան ավտոմայրուղում՝ ըստ Զարուհի Փոստանջյանի եւ «Ժառանգություն» կուսակցության հայտարարության:

- ՌԴ անվտանգության դաշնային ծառայությունը խոչընդոտել է «Ժառանգության» քարոզչական խմբի գործունեությունը Սյունիքի N38

Շարունակությունը՝ էջ 4

Սերժ Սարգսյանի այցը Սյունիքի մարզ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Աշխատանքային այցով Սյունիքի մարզում գտնվող նախագահ Սերժ Սարգսյանն այցի շրջանակներում ծանոթացել է Սյունիքի հանքարդյունաբերական եւ էներգետիկ խոշոր արտադրական ընկերությունների կողքին իրենց զարգացման ծրագրերն իրագործող փոքր ու միջին ձեռնարկությունների աշխատանքին, ներդրումային ծրագրերին եւ հեռանկարին: Նախագահը, մասնավորապես, այցելել է Սիսիանի «Ավալ Թրեիդ» ընկերության տրիկոտաժի արտադրամաս, որը հիմնվել է 2012թ. դեկտեմբերին եւ ընթացիկ տարվա ապրիլից իրականացնում է տրիկոտաժի արտադրություն: Նախագահին ներկայացվել է, որ չորս ամսվա ընթացքում ընկերությունը կատարել է 30.0 մլն դրամի ներդրում, ներառյալ՝ ժամանակակից մեքենաարքավորումների ներմուծումը: Ընկերությունում աշխատում է 90 մարդ՝ 70-80 հազ. դրամ միջին ամսական աշխատավարձով: 2013թ. ապրիլ-օգոստոս ամիսների դրությամբ, ըստ ընկերության պատասխանատուների, թողարկվել է մոտ 70.7 մլն դրամի արտադրանք, որն ամբողջությամբ արտահանվել է ՌԴ: Ընկերությունը նախատեսում է առաջիկայում ընդլայնել արտահանման շուկան՝ ավելացնելով արտադրական հզորությունները, որը հնարավորություն կտա աշխատատեղերի թիվը հասցնել մինչեւ 120-ի:

Գորիս քաղաքում նախագահն այցելել է «Գորիսի Գամմա» ընկերություն, որն այժմ Զանգեզուրի պղնձամոլիբդենային ընկերության հետ համատեղ իրականացնում է միջազգային պահանջներին համապատասխան ժամանակակից հաստոցների արտադրության նոր ծրագիր: Ընկերության ներկայացուցիչները նշել են, որ արդեն ավարտվել են բանակցությունները գերմանական մատակարար կազմակերպության հետ, այժմ բանակցություններ են ընթանում հնարավոր պատվիրատու կազմակերպությունների հետ՝ պահանջարկի եւ տեսականու ճշտման նպատակով: Նշվել է, որ ծրագրի հաջող իրականացման դեպքում Հայաստանում կարտադրվեն թվածրագրային կառավարման գերճշգրիտ խառատային եւ ֆրեզերային հաստոցներ, որոնք համապատասխանում են եվրոպական ստանդարտներին: Ծրագրի 1-ին փուլի ներդրումները կազմել են 1.0 մլն ԱՄՆ դոլար: Համապատասխան պահանջարկի դեպքում, արտադրական ծավալների ընդլայնմանը զուգահեռ, աշխատատեղերի քանակը հնարավոր է հասցնել մինչեւ 130-ի:

«Գորիսի Գամմա» ձեռնարկությունը հիմնադրվել է դեռեւս 1979թ. եւ մասնագիտացված էր նախկին ԽՍՀՄ պաշտպանության նախարարության ռազմաարդյունաբերական համալիրի համար հատուկ տեխնիկայի արտադրության բնագավառում: 1996թ. ձեռնարկությունը վերակազմավորվել է որպես փակ բաժնետիրական ընկերություն, որի 20% պետական բաժնեմասն անհատույց սեփականաշնորհվել է աշխատավորական կոլեկտիվին, իսկ 80%-ը՝ 2001թ. մասնավորեցվել է: Ներկայում ընկերությունում գործում են մեխանիկական, հատուկ տեխ-

Շարունակությունը՝ էջ 3

Սյունյաց երկիր
www.syuniacyerkir.am

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի Ս ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ

ՇԱԲԱԹ • 5 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2013Թ • № 26 (299)

ՆԵԼՍՈՆ ՈՍԿԱՆՅԱՆ. «Գորիսն ապրում է իր կյանքով, եւ քաղաքի առօրյան չի շեղվել բնականոն հունից»

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀԱՄԱՐԻՆ

Գորիսյան անցուդարձը շարունակում է մնալ հանրության համակ ուշադրության ներքո: Դա՝ 2013թ. հունիսի 1-ից, երբ քաղաքում տեղի ունեցավ ողբերգական միջադեպ՝ մեկ մարդու մահվան ելքով: Ստեղծված լարված իրավիճակում, այդ բոլորով հանդերձ, կյանքը պետք է շարունակվեր: Եվ շարունակվեց... Նոր իրավիճակում ավելի մեծացավ քաղաքապետարանի դերը. նախ՝ հնարավորինս պետք է վերականգնվեր քաղաքացիական համերաշխությունը, ապա նորմալ հունով ընթանար քաղաքային տնտեսությունը, կյանքի կոչվեին ընթացքի մեջ գտնվող կամ մինչ այդ նախատեսված ծրագրերը: Թե որքանով քաղաքապետարանը կարողացավ կատարել իր առաքելությունը դժվարին այդ ժամանակահատվածում՝ փորձեցինք պարզել քաղաքապետ Նելսոն Ոսկանյանից:

– Պարո՛ն քաղաքապետ, ինչպե՞ս եք գնահատում հունիսի 1-ի հայտնի ողբերգական միջադեպից հետո ստեղծված կացությունը համայնքում, արդյո՞ք քաղաքի բնակչության մեջ առաջացած երկփեղկությունը շարունակվում է, արդյո՞ք գորիսյան առօրյան շարունակում է շեղված մնալ բնականոն հունից:

– Տեղի է ունեցել ցավալի միջադեպ, որը, բնականաբար, որոշակի բացասական անդրադարձ ունեցավ հանրության տրամադրության վրա: Բայց տարբեր մարդկանց կողմից տեղի-անտեղի անընդհատ մեկնաբանություններ էին հնչում, վարկածներ առաջ քաշվում, ասեկոսեներ տարածվում: Դա ոչ միայն չէր նպաստում նախաքննությանը, այլեւ, ինչոր չափով, խորացնում էր անհամերաշխությունը: Եղան մարդիկ, ովքեր սկսեցին ձեռքեր տաքացնել այդ ողբերգության վրա եւ այսօր էլ շարունակում են դրանով զբաղվել: Գորիսեցիների մեծագույն մասը, սակայն, սթափ ու հավասարակշռված պահվածք դրսեւորեց, ինչը թույլ տվեց, որ հանրային ընթացքը չշեղվի բնականոն հունից, ու կրքերի հետագա բորբոքում տեղի չունենա:

– Որքանով նկատել ենք՝ քաղաքապետարանը եւ անձամբ Դուք զուսպ էիք գնահատականներում, արտահայտություններում:

– Որոշ մարդկանց, նաեւ պաշտոնյաների, թվում էր, թե իրենք ամեն ինչ գիտեն, բայց դա այդպես չէր: Իսկ մենք, մինչդեռ, այլ սկզբունք էինք որդեգրել՝ յուրաքանչյուր ոք թող զբաղվի իր գործով: Քաղաքապետարանը հենց այդ սկզբունքով էլ առաջնորդվում էր, երբեմն նաեւ գնահատականներ էինք տալիս՝ զուսպ, մթնոլորտի հետագա շիկացումը կանխող: Այս կամ այն կողմին մեղադրելն իմ իրավասություններից դուրս եմ համարել՝ դա իրավացիորեն դիտելով նախաքննական մարմնի գործը: Եվ ամբողջ այդ ընթացքում Գորիսն ապրեց (ու ապրում է) իր կյանքով, քաղաքային առօրյան դուրս չեկավ բնականոն հունից: Քաղաքապետարանը, քաղաքի տարածքում գտնվող կազմակերպություններից յուրաքանչյուրն արել եւ անում են իրենց գործը: Այլ կարգի մեկնաբանություններն ու գնահատականներն իրականությանը չեն համապատասխանում:

– Ավանդական որոշ միջոցառումներ, այնուամենայնիվ, տեղի չունեցան կամ անորոշ ժամանակով հետաձգվեցին: Օրինակ՝ Ակսել Բակունցի ծննդյան օրն անցկացվող միջոցառումների շարքը...

– Միշտ չէ, եթե հիշում եք, որ Բակունցյան օրերը կամ Գորիսյան տոնը հունիսի սկզբին ենք անցկացրել: Հաճախ աշնանն ենք կազմակերպել ավանդական այդ տոնակատարությունը: Այս անգամ

Շարունակությունը՝ էջ 5

Ոչ մրցակցային ընտրություն №38 ընտրատարածքում

Կապանում ու Մեղրիում արձանագրվեց ընտրողների՝ վերջին տարիների համար աննախադեպ պասիվություն

29 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2013Թ.

Ազգային ժողովի պատգամավորի լրացուցիչ ընտրությունը Սյունիքի մարզի N38 ընտրատարածքում, որ տեղի ունեցավ 2013թ. սեպտեմբերի 29-ին, այլեւս պատմություն է:

Քաղաքական իմաստով զրոյական նշանակության այդ միջոցառումը, սակայն, հերթական անգամ ջրի երես հանեց սյունիքյան շատ իրողություններ:

Ընտրությունը, աներկբայորեն, ոչ մրցակցային էր. դա տեղի ունեցած ընտրության առաջին գլխավոր բնութագրիչն է: ՀՀԿ-ի թեկնածուն շատ թե քիչ լուրջ մրցակից չուներ: Տպավորություն ունենք, որ «ժառանգությունն» ընտրախաղի էր դուրս եկել ընդամենն իր մասին եղած հիշողությունը բորբոք պահելու, այլ ոչ թե պատգամավորական նոր մանդատ ձեռք բերելու համար, այլապես կառաջադրեր ավելի մրցունակ թեկնածու, մանավանդ որ կուսակցությունն ունի երեւելի ու պատկառազդու ոչ քիչ ներկայացուցիչներ: Միաժամանակ չենք ուզում հավատալ շրջանառվող կարծիքին, թե իբր «ժառանգությունը», ներքին ինչ-ինչ պայմանավորվածությամբ, սեպտեմբերի 29-ի միջոցառումը լեգիտիմությամբ շպարելու առաքելություն ուներ:

Երկրի քաղաքական դաշտի շատ թե քիչ ազդեցիկ կուսակցությունները հերթական անգամ դուրս չեկան իրենց ապահով խրամատներից՝ ասպարեզը որերորդ անգամ զիջելով ավագ եղբորը՝ ՀՀԿ-ին: ՕԵԿ-ի պարագայում ամեն ինչ հասկանալի է. ՀՀԿ-ի հետ դաշինքի մեջ է: ԲՀԿ-ում, կարծեք, զուտ մարդկային գործոնով պայմանավորված դիրքորոշում որդեգրվեց: Կապանում մեծ հեղինակություն վայելող ԲՀԿ-ական պատգամավոր Մերուժան Սիմոնյանը, ըստ էության, աննպատակահարմար էր գտել տվյալ իրավիճակում կուսակցությունից թեկնածու առաջադրելը: Իսկ ՀՅԴ-ի դիրքորոշումը, արտահայտված այդ կուսակցության մարզային կոմիտեի սեպտեմբերի 19-ի հայտարարության մեջ, թվում է, հեռու էր անկեղծությունից: Այնպես որ սյունիքյան ու մասնավորապես կապանյան քաղաքական դաշտը՝ անապատացած, փռվեց ՀՀԿ-ի թեկնածուի ոտքերի տակ: Մնում էր միջկլանային հարաբերություններում առկա խութերի հաղթահարումը...

Աննշանակ այդ միջոցառման առնչությամբ, մինչդեռ, հեռուն գնացող հաշվարկներ ուներ Սյունիքի օլիգարխիկ համակարգի պարագլուխը: Այդ միջոցառմամբ նա մի քանի հարց պետք է լուծեր եւ լուծեց: Նախ՝ պատգամավորական մանդատը պետք է փոխանցվեր մեկին, ում հնարավոր գործունեության (կամ անգործության) համապատկերի վրա N38 ընտրատարածքի նախորդ պատգամավոր Վահե Հակոբյանը կերեւար իբրեւ երանի տալու արժանի պատգամավոր: Այնուհետեւ՝ պետք է մարզի քաղաքական դաշտում հերթական անգամ ի չիք դարձվեր որեւէ առաջադեմ երիտասարդ գործչի առաջադրման եւ ընտրության հնարավորությունը, եթե անգամ այդ երիտասարդը լիներ կլանի ներսից: Երկրի քաղաքական ղեկավարությանն էլ պետք է ապացուցվեր, որ մարզում իշխող ընտանիքն ի վիճակի է առանց Սուրեն Խաչատրյանի ապահովել ՀՀԿ-ի թեկնածուի հաղթանակը: Եվ այդ ամենը Մաքսիմ Հակոբյանին հաջողվեց: Նրան չհաջողվեց, սակայն, սեպտեմբերի 29-ի ընտրությունն անցկացնել նախորդ ընտրություններից փոքր-ինչ դրականորեն տարբերվող տեխնոլոգիաներով: Իհարկե, առանց ուսումնասիրման չենք կարող հավատ ընծայել Սամվել Հայրապետյանի հայտարարությանը՝ 10-հազարական դրամ ամեն մի ընտրողի բաժանելու մասին, բայց կլանի պարագլուխը երեւի թե պետք է հրաժարվեր Քաջարանի ընտրողներին ոչխարի միս բաժանելու քայլից: Եթե նույնիսկ միս էր բաժանում, ապա չպետք է այն համարվեր (հայտարարվեր) սրբազան մատաղ՝ հանուն Աստծո եւ նրա որդու ու սուրբ հոգու, քանզի շարիաթի օրենքներով օծված սպանդանոցում շիա մահմեդական ղասաբի ձեռամբ մորթված ոչխարով, որքանով տեղյակ ենք մեր պատմությունից, անցած 1700 տարում հայ քրիստոնյաները երբեք մատաղ չեն արել:

Մաքսիմ Հակոբյանն անհարմար վիճակում էր հայտնվել մեկ այլ առիթով եւս: 2008թ.՝ Կապանի քաղաքապետի ընտրության ժամանակ, տեղի-անտեղի շատ էր վարկաբեկել գործող քաղաքապետ ու քաղաքապետի թեկնածու Արմեն Կարապետյանին: Վերջինիս պարտության լուրն առնելու պահին, ինչպես ականատեսներն են պատմում, նույնիսկ ակամա ինչ-որ պարային շարժումներ է արել: Դրանից հինգ տարի անց, մինչդեռ, փորձում էր ապացուցել, որ ՀՀԿ-ի թեկնածու Արմեն Կարապետյանն անապական է եւ ազնվագույնն է բոլոր կապանցիների մեջ:

Հետաքրքիր էր Սուրեն Խաչատրյանի գործոնն ընտրության նախապատրաստման ու անցկացման ընթացքում: Նա՝ որպես ՀՀԿ մարզային խորհրդի նախագահ, ժամանակին մարզխորհրդի նիստ գումարեց եւ, հակառակ բազմաթիվ հանրապետականների ընդդիմացման, իր ոչ վաղ անցյալի օգնականին պատգամավորի թեկնածու առաջադրեց: Եվ իր կողմնակիցներին կոչ արեց հնարավոր բոլոր միջոցներով սատարել Արմեն Կարապետյանին: Քվեարկությունից մեկ շաբաթ առաջ, սակայն, պատգամավորի թեկնածուն հրապարակային ելույթներով սահմանաքար կանգնեցրեց իր եւ նախկին մարզպետի հարաբերություններում՝ իրեն համարելով Մաքսիմ Հակոբյանի ընտանիքի կողմից առաջադրված թեկնածու:

Սեպտեմբերի 29-ին կապանյան քվեարկության ելքը, որ որոշիչ նշանակություն ունեցավ ամբողջ ընտրատարածքում, մեծապես պայմանավորված էր (խոստովանենք) ՀՀԿ-ական թեկնածուի եղբոր՝ Արարատ Կարապետյանի գործոնով: Նախընտրական շրջանում տեւական ժամանակով Կապանից նրա բացակայությունն այլեւայլ մեկնաբանությունների տեղիք էր տվել, մանավանդ որ թեկնածուների առաջադրման նախօրյակին մրցունակ հավակնորդների շարքում նշվում էր նաեւ նրա որդու՝ Մանաս Կարապետյանի անունը, ում, սակայն, չթողեցին առաջադրվել: Նախընտրական ամենաբուռն օրերին շրջանառության մեջ դրվեց խոսակցություն, թե Մաքսիմ Հակոբյանը Կապանում ճանապարհաշինական կազմակերպություն ստեղծելու ախորժակ ունի՝

Շարունակությունը՝ էջ 7

Լուրեր

Սեպտեմբերի 16-17-ին Սյունիքի մարզում էր Բելառուսի Հանրապետության Մինսկի մարզի պատվիրակությունը՝ մարզի ղեկավար Բորիս Բատուրայի գլխավորությամբ: Մարզպետարանում տեղի ունեցած հանդիպմանը մասնակցում էին նաեւ մարզի քաղաքային համայնքների ղեկավարները:

Սեպտեմբերի 18-ին աշխատանքից ազատվել է «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ «Մեղրի» մասնաճյուղի տնօրեն Միքայել (Մարատ) Օհանյանը: Մեղրիում համառորեն շրջանառվում է վարկածը, որ Միքայել (Մարատ) Օհանյանն աշխատանքից ազատվել է կառավարության պատասխանատուների ճնշմամբ, քանի որ նա, լինելով Մեղրի համայնքի ավագանու բնապահպանական հանձնաժողովի նախագահ, դատապարտել է կառավարության՝ Մեղրու շրջանում իրականացվող քաղաքականությունը:

2013թ. սեպտեմբերի 28-ին ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի որոշմամբ Աշոտ Մարդյանը նշանակվել է Սյունիքի մարզպետի տեղակալ: Մինչ այդ նա աշխատում էր Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական եւ սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ: Նոր փոխմարզպետը ծնվել է 1968թ.՝ Գորիսում: Բարձրագույն կրթություն ստացել է Թուրքմենստանի պետական համալսարանի մաթեմատիկայի ֆակուլտետում (1985-1987թթ.), ապա՝ Երեւանի պետական համալսարանի մաթեմատիկայի ֆակուլտետում (1989-1992թթ.): ՀՀԿ անդամ է: Ամուսնացած է, ունի երկու երեխա: Փոխմարզպետի պաշտոնը թափուր էր մնացել Արայիկ Դոլունցի պաշտոնաթողությունից հետո:

Սեպտեմբերի 23-ին նշվեց Մեղրու շրջանի Շվանիձոր գյուղի միջնակարգ դպրոցի հիմնադրման 130-ամյակը: Տոնակատարության մասին՝ հաջորդ համարում:

Սեպտեմբերի 26-ին տեղի ունեցավ Քաջարանին քաղաքի կարգավիճակ շնորհելու 55-ամյակին նվիրված տոնակատարություն: Այդ մասին՝ հաջորդ համարում:

Սեպտեմբերի 29-ին Գորիսում ավանդական համաքաղաքային տոնն էր, որի ընթացքում վերաօծվեց Սբ Հռիփսիմե եկեղեցին: Տոնակատարության մասին՝ հաջորդ համարում:

Սեպտեմբերի 27-ին Կապանի N2 ավագ դպրոցում տեղի ունեցավ «Երիտասարդությունը շարժման մեջ» փոխանակման ծրագրի ամփոփիչ հանդիպումը: Աշակերտները պատմեցին ծրագրի շրջանակներում ստացած տպավորությունների եւ ձեռքբերումների մասին՝ տեսանյութերով եւ լուսանկարներով ներկայացնելով հանդիպումներն ու միջոցառումները: Կրթօջախի տնօրենը ֆինանսական օգնության համար շնորհակալություն հայտնեց «Դանդի փրիշս մեթալս-Կապան» ընկերությանը (գլխավոր տնօրեն՝ Հրաչ Ջաբրայան), քաղաքապետ Աշոտ Հայրապետյանին, իսկ նախապատրաստական աշխատանքներ տանելու համար՝ խմբի անդամներին, դասղեկներին, երեխաների ծնողներին: Հանդիպման մասնակիցները հույս հայտնեցին, որ երեխաները կշարունակեն կապ պահպանել Բուլղարիայի Ձլատիստա քաղաքի Սուրբ Պաիսի Հիլենդարսկու անվան ավագ դպրոցի աշակերտների հետ:

Սերժ Սարգսյանի այցը Սյունիքի մարզ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Սկիզբը՝ էջ 1

նիկայի հավաքման, էլեկտրաշարժիչների հավաքման, օպտիկական արտադրամասերը եւ փորձարկումների լաբորատորիան: Ընկերության արտադրանքի իրացման հիմնական շուկան Ռուսաստանի Դաշնությունն է, պատասխանատուների հավաստմամբ, պատվերներ կան նաեւ Կանադայից: 2013թ. հունվար-օգոստոս ամիսներին ընկերությունը թողարկել է 238.0 մլն դրամի արտադրանք՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ արձանագրելով 23%-ի աճ: Նշվել է, որ բացի սերիական արտադրանքից, ընկերությունը կատարում է նաեւ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի պատվերները՝ վերջինիս համար պատրաստելով գործիքներ եւ սարքավորումներ:

Աշխատանքային այցի շրջանակներում նախագահ Սերժ Սարգսյանը եղել է նաեւ Քաջարան քաղաքում: Նա նախ այցելել է զոհված ազատամարտիկների հուշահամալիր, ծաղիկներ դրել եւ հարգանքի տուրք մատուցել հայրենիքի համար զոհված հայորդիների հիշատակին:

Այնուհետեւ հանրապետության նախագահը Քաջարանի կենտրոնական հրապարակում մասնակցել է քաղաքի 55-ամյակին նվիրված միջոցառումներին, որի շրջանակներում պետական պարգեւներ եւ շնորհակալագրեր է հանձնել տարբեր ոլորտներում իրենց հայրենավեր գործունեությամբ աչքի ընկած մի խումբ անձանց. «Քաջարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի պոլիկլինիկայի բաժնի վարիչ Հրաչյա Թադեւոսյանը ՀՀ նախագահի հրամանագրով պարգեւատրվել է Մխիթար Հերացու մեդալով, «Ռիվս» գիտաարտադրական միավորման գործադիր տնօրեն Միխայիլ Առուստամյանը (ՌԴ)՝ Անանիա Շիրակացու մեդալով: Երկարամյա եւ բարեխիղճ աշխատանքի համար Հայաստանի Հանրապետության նախագահի շնորհակալագրով են պարգեւատրվել «Քաջարան համայնքի կոմունալ տնտեսություն» ՓԲԸ-ի գլխավոր ճարտարագետ Սարո Հայրապետյանը, «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի հանքաքարի ջարդման տեղափոխման արտադրամասի էլեկտրագազաեռակցող Զախար Միրզոյանը: Քաջարանում հանրապետության նախագահին հանձնել են համայնքի ավագանու որոշմամբ սահմանված «Արցախյան ազատամարտ» առաջին հուշամեդալը:

Նախագահը շնորհավորել է քաղաքի տոնի, ինչպես նաեւ պարգեւատրման կապակցությամբ, շնորհակալություն հայտնել քաջարանցիներին՝ քաղաքի զարգացման գործում իրենց ամենօրյա ջանքերի ու նվիրումի համար, մաղթել հաջողություններ եւ վստահեցրել, որ տարեցտարի ինչպես Քաջարանը, այնպես էլ մեր հանրապետության այլ բնակավայրերն ավելի բարեկեցիկ եւ զարգացած են լինելու: Հանրապետության նախագահը կոչ է արել տոնակատարության մասնակիցներին ինչպես իրենց քաղաքի, այնպես էլ մեր հանրապետության ապագային նայել լավատեսությամբ ու հավատով:

Տոնակատարության ավարտին Սերժ Սարգսյանը ներկա է գտնվել Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի երկարամյա նախկին տնօրեն, լեռնահանքային արդյունաբերության հմուտ կազմակերպիչ Ֆրունզե Պետրոսյանի հուշարձանի բացմանը:

Աշխատանքային այցի շրջանակներում նախագահը մասնակցել է նաեւ վերակառուցված եւ արդիականացված Քաջարանի բժշկական կենտրոնի բացման արարողությանը, Կապանում այցելել Գարեգին Նժդեհի անվան հրապարակ, որտեղ շրջայցի ժամանակ ծանոթացել է հրապարակի արդիականացման ծրագրի իրագործման, իսկ Կապանի թիվ 2 ավագ դպրոցում՝ ուսումնական այդ հաստատության շինարարական աշխատանքների ընթացքին: Մարզի Սյունիք համայնքում Սերժ Սարգսյանն այցելել է մանր եղջերավոր անասունների մորթման եւ վերամշակման նորակառույց արտադրամաս:

Քաջարանի բժշկական կենտրոնը, որի արդիականացման ուղղությամբ աշխատանքներն սկսվել են 2011թ. օգոստոսին, պատասխանատուների ներկայացմամբ, հագեցած է ժամանակակից բժշկական սարքավորումներով, ամբողջովին հագեցած են վիրասրահները: Կենտրոնը հագեցած է նաեւ կահույքով եւ բժշկական պարագաներով:

Կապանի Գարեգին Նժդեհի անվան հրապարակի արդիականացման ծրագրի իրականացման վերաբերյալ հանրապետության նախագահին զեկուցվել է, որ արդեն իսկ կատարվել են հողային աշխատանքները, մշակման փուլում են նախագծահաշվային փաստաթղթերը: Ծրագրով նախատեսվում է իրականացնել մշակույթի պալատի շենքի ճակատային մասի, ջրավազանի վերակառուցման, շատրվանների՝ երաժշտական նվագակցությամբ համահունչ գունաձայնային էֆեկտներով համալրման եւ վերանորոգման, ջրավազանին կից տարածքում հանգստի գոտու կազմակերպման, ինչպես նաեւ զբոսայգուն հարակից Վաչագան գետի ջրային ավազանի բարեկարգման աշխատանքներ:

Կապանի թիվ 2 ավագ դպրոցի շինարարական աշխատանքները, ՀՀ կառավարության 2011թ. որոշմամբ հաստատված «Կրթական օբյեկտների շինարարություն» ծրագրի շրջանակներում, սկսվել են 2011թ. սեպտեմբերից: Նախագահին զեկուցվել է, որ մինչեւ 2013թ. դեկտեմբեր կիրականացվեն ուսումնական այդ հաստատության տանիքի, դռների եւ լուսամուտների տեղադրման, ներքին ջրագծի եւ կոյուղու մոնտաժման, հատակի նախապատրաստական շերտի կառուցման եւ ներքին հարդարման աշխատանքները: Կառույցն ավարտելու նպատակով ՀՀ 2014թ. պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 204.0 մլն դրամ: Նշվել է, որ դպրոցի ուսումնական գործընթացը ներկայումս կազմակերպվում է քաղաքի այլ դպրոցներում:

Աշխատանքային այցի շրջանակներում հանրապետության նախագահն այցելելով նաեւ Սյունիք համայնքի մանր եղջերավոր անասունների մորթման եւ վերամշակման նորակառույց արտադրամաս՝ ծանոթացել է իրականացված ներդրումներին եւ արտադրամասի զարգացման ծրագրերին: Արտադրամասը, որի շինարարական աշխատանքներն իրականացվել են 2012-2013թթ., պատասխանատուների հավաստմամբ, հնարավորություն կտա մանր եղջերավոր անասունների ընդունման, մորթման եւ պահման գործընթացներն իրականացնել ժամանակակից մեթոդներով: Նախատեսվում է արտահանում իրականացնել Իրանի Իսլամական Հանրապետություն: Ընկերությունում աշխատում է 43 մարդ՝ 180.0 հազ. դրամ միջին ամսական աշխատավարձով: Արտահանման ծավալների ընդլայնմանը զուգահեռ նախատեսվում է աշխատատեղերի թիվը հասցնել մինչեւ 75-ի: Նշվել է, որ արտադրամասի գործարկումը կարեւոր է ոչ միայն նոր աշխատատեղերի ստեղծման տեսանկյունից, այլեւ լուրջ խթան է մարզում, ինչպես նաեւ ամբողջ հանրապետության տարածքում մանր եղջերավոր անասունների բուծման համար:

26.09.2013

Լուրեր

Սեպտեմբերի 27-ին Կապանի ժամանակակից արվեստի թանգարանում, Բորիս Մինասյանի նախաձեռնությամբ, բացվեց «Աշուն-2013» խորագրով գեղանկարների ցուցահանդես-վաճառք, որտեղ իր բազմաժանր կտավներն էր ներկայացրել կապանցի ութ նկարիչ: Միջոցառմանը մասնակցում էին Կապանի արվեստասեր հասարակայնության ներկայացուցիչներ:

Սեպտեմբերի 28-ին Կապանի մշակույթի կենտրոնում անցկացվեց շախմատի կայծակնային մրցաշար, որը նվիրված էր ՀՀ անկախության տոնին: Մասնակիցները 26-ն էին՝ Կապան, Քաջարան, Գորիս եւ Սիսիան քաղաքներից: Տարիքային սահմանափակում չկար: Ամենատարեց մասնակիցը 74 տարեկան էր: Մրցույթին ներկա էր Սյունիքի մարզի շախմատային ֆեդերացիայի պատասխանատու քարտուղար Սամվել Մարգարյանը: Մրցաշարի հաղթող ճանաչվեց կապանցի Արմեն Խաչատրյանը, իսկ երկրորդ մրցանակին արժանացավ Վարդան Մովսիսյանը՝ Սիսիանից: Հաղթողներն արժանացան դրամական պարգեւների: Մրցաշարը հովանավորել էր «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն:

Կապանի քաղաքապետարանում սեպտեմբերի 27-ին տեղի ունեցավ «Կապան քաղաքում ջրամատակարարման ցանցի վերանորոգում» ծրագրի նախագծի հանրային քննարկում: Նախագիծը ներկայացրեց «Ջրտուք» ՍՊԸ տնօրեն Արմեն Ավագյանը: Ծրագրի նպատակն է վերականգնել կեղտաջրերի մաքրման կայանը, նորոգել ջրատարներ եւ կատարել բաշխիչ ցանցի վերանորոգում: Նախատեսվում է 5,6կմ ջրատար ցանցի վերականգնում եւ օրվա կարգավորիչ ջրամբարների նորոգում: Քնարիկ Հովհաննիսյանը, ով հանդիսանում է ընկերության բնապահպանության մասնագետ, հավաստիացրեց, որ ծրագիրը կնվազեցնի խմելու ջրի կորուստները, կեղտաջրերը կուղղվեն մաքրման կայան, եւ կբացառվի Ողջի գետի աղտոտումը: Եղան մի շարք տարակարծություններ, կասկածներ, որոնք, սակայն, քննարկման արդյունքում պարզաբանվեցին: Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը ողջունեց ծրագիրը եւ համոզմունք հայտնեց, որ նախագիծը խոստումնալից է:

Անկախության օրվան էր նվիրված ցերեկույթը, որ կրում էր «Արեւմտահայերենը սպասում է իր բնօրրանին» խորագիրը: Բանասեր Հասմիկ Գրիգորյանը միջոցառման սկզբում հայտնեց, որ ցերեկույթը նպատակ ունի փոքրիշատե ծանոթացնել արեւմտահայերենի հնչյունական, քերականական համակարգին, արեւմտահայերենում եւ արեւելահայերենում որոշ բառաձեւերի գործածությանը: Դպրոցականները ներկայացրին հայոց լեզվի զարգացման երեք փուլը (գրաբար, միջին հայերեն, աշխարհաբար), գրական հայերենի երկու ճյուղի՝ արեւմտահայերենի եւ արեւելահայերենի առաջացման աշխարհաքաղաքական, սոցիալ-տնտեսական պատճառները: Հնչեցին օտարազգի հայագետների, հայ երեւելի դեմքերի ասույթներ՝ նվիրված հայերենի կենսունակությանը, հայոց լեզվի անաղարտության պահպանմանը: Միջոցառման մասնակից դպրոցականներն արտասանեցին արեւմտահայ քնարերգուների՝ Մեծարենց, Դուրյան, Սիամանթո, Վարուժան, բանաստեղծություններից՝ ձգտելով պահպանել արեւմտահայերենի հնչողությունը:

Այսօրվա երկիր
www.syuniacyerkir.am

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի Ց ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ

ՇԱԲԱԹ • 5 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2013Թ • № 26 (299)

²Ü¸ð²¸²ðÒ

Պլատոնն իմ բարեկամն է, բայց...

Դիտարկումներ Մեղրի-Երեւան ավտոմայրուղում տեղի ունեցած միջադեպի վերաբերյալ

Սկիզբը՝ էջ 1

ընտրատարածքում, որի կազմում են եղել ԱԺ պատգամավորի թեկնածու Սամվել Հայրապետյանը, ԱԺ պատգամավոր Զարուհի Փոստանջյանը:

- Առավոտյան Կապանից Մեղրի տանող ճանապարհին ԱԴԾ (Անվտանգության դաշնային ծառայություն) աշխատակիցները կանգնեցրել եւ խուզարկել են «ժառանգության» քարոզչախմբի երկու մեքենաները՝ առանց որեւէ հիմնավորման: Մեքենաներին չեն թույլատրել շարունակել իրենց երթը, մինչեւ որ Զարուհի Փոստանջյանը չի ներկայացրել պատգամավորական իր վկայականը, խմբի առաքելությունը եւ բացատրություն պահանջել կատարվող գործողությունների համար, որից հետո ԱԴԾ-ականը զանգ է տվել ինչ-որ մեկին, եւ ապա թույլ տվել քարոզչախմբին շարունակել ճանապարհը:

- Երեկոյան՝ հետդարձի ճանապարհին, «ժառանգության» ավտոշարասյունը նորից կանգնեցվել է ՌԴ ԱԴԾ-ի ներկայացուցչի կողմից՝ ստուգման եւ խուզարկման նպատակով: Սահմանապահները վերստին մերժել են Զարուհի Փոստանջյանի պահանջը՝ հիմնավորելու իրենց գործողությունը: Ռուս ԱԴԾ-ականները գործել են կոպիտ եւ անհարգալից պահվածք դրսեւորել թե՛ պատգամավորի, թե՛ խմբի մյուս անդամների՝ ՀՀ քաղաքացիների հանդեպ:

- Միջադեպի ամբողջ ընթացքը նկարահանել է պատգամավորի թեկնածու Սամվել Հայրապետյանի նախընտրական շտաբի մամլո խոսնակ Դավիթ Հակոբյանը, սակայն ԱԴԾ-ականը փորձել է խլել նրա տեսախցիկը եւ կոտրել այն:

- Հետագայում դեպքի վայր ժամանած մի բարձրաստիճան ԱԴԾ-ական՝ ոմն գնդապետ Միրզոեւ, Զարուհի Փոստանջյանից ներողություն է խնդրել իր ստորադասի կատարած արարքի համար, հիմնավորել ԱԴԾ-ի գործողություններն ինչ-որ իրանցի թմրագործակալի որոնողական աշխատանքներով եւ առաջարկել ներքին կարգով փոխհատուցել կոտրված տեսախցիկի արժեքը: Սակայն պատգամավորը հրաժարվել է առաջարկվող գումարից եւ պնդել, որ այն պետք է վճարվի դատական կարգով՝ ՀՀ օրենքներով նման հանցագործության համար նախատեսված պատժին համապատասխան:

- Միջադեպը դիտարկվում է որպես կոպիտ միջամտություն ՀՀ ներքաղաքական գործընթացին: Այն եւս մեկ անգամ ի ցույց դրեց ընտրությունները կեղծած եւ իշխանությունը բռնազավթած խմբի անկարողությունը՝ ապահովելու ՀՀ ինքնիշխանությունը:

- Հայաստանում Ռուսաստանի իշխանություններից պահանջվում է պաշտոնապես ներողություն խնդրել եւ բացատրություններ տալ միջադեպի կապակցությամբ, իսկ ՀՀ իրավապահ եւ դատական մարմիններից՝ պատասխանատվության ենթարկել մեղավորներին:

Ի՞նչ է, այնուամենայնիվ, տեղի ունեցել Մեղրի-Երեւան ավտոմայրուղում

Զարուհի Փոստանջյանի եւ «ժառանգություն» կուսակցության պարզաբանումներն արդեն իսկ հայտնի են: Հայտնի են նաեւ դրանցով հիմնավորված արձագանքները: Հիմա փորձենք շարադրել միջադեպի այն վարկածը, որ գոյություն ունի փոստանջյանական պարզաբանումներից անդին:

Եվ այսպես՝ 2013թ. սեպտեմբերի 24-ին՝ ժամը 00.45 րոպեին, հայ-իրանական սահմանի «Ագարակ» մաքսակետում ռուս սահմանապահների կողմից բռնվել է Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի Բեհզադ Ա.-ն, ով փորձում էր թմրանյութ անցկացնել դեպի մեր հանրապետության տարածք: Նույն օրը, մաքսակետի աշխատակցի ուղեկցությամբ, երթուղային միկրոավտոբուսով նրան ուղարկել են Երեւան: Ճանապարհին՝ Արենի գյուղի մերձակայքում, Բեհզադին հաջողվել է փախչել: Այդ օրվա ժամը 17-ից սկսած հանրապետության իրավապահ մարմինները սկսել են փախուստի մեջ գտնվող քաղաքացու որոնումները: Օպերացիային, միջգերատեսչական համագործակցության շրջանակներում, ընդգրկվել է նաեւ Մեղրիում տեղակայված ՌԴ սահմանապահ ջոկատը: Զորամասում էլ՝ սպայի գլխավորությամբ, առանձնացրել են մարդկանց, ովքեր էլ ընդգրկվել են Մեղրի-Երեւան ավտոմայրուղու վրա դրված վերահսկողության ծառայություն իրականացնող խմբի մեջ:

Սեպտեմբերի 24-ին ճանապարհին կանգնեցվել է այն մեքենան, որով Մեղրի էր այցելում ԱԺ պատգամավոր Զարուհի Փոստանջյանը (ի դեպ, այդ ընթացքում կանգնեցվել եւ ստուգվել է 1100 մեքենա): Նա ներկայացրել է պատգամավորական վկայականը, որից անմիջապես հետո թույլատրվել է մեքենայի ընթացքը դեպի Մեղրի, որտեղ պետք է քարոզարշավ իրականացներ պատգամավորության թեկնածու առաջադրված իր կուսակցի օգտին:

Սեպտեմբերի 25-ին՝ ժամը 20.00-ի սահմաններում, զինվորական վերակարգին է մոտեցել Մեղրիից եկող հերթական ավտոմեքենան: Իմանալով, որ դա ԱԺ պատգամավորի ավտոմեքենան է, սահմանապահները չեն էլ կամեցել կանգնեցնել այն: Սակայն պատգամավորի մեքենան կանգ է առել ուղեկալում, տիկին Փոստանջյանը տեղեկացրել է, որ իրենց հետեւից գալիս է կարմիր «Նիվա» մակնիշի մեքենան, որը ստուգելու կարիք չկա, քանզի այդ մեքենայի ուղեւորներն իրենց խմբից են: Զինվորականը շրջվել է դեպի ուղեկալի ավագը եւ ռուսերենով զեկուցել, որ ԱԺ պատգամավոր Զարուհի Փոստանջյանն է… Շրջված զինվորականի բաճկոնին (մեջքի մասում) գրված է եղել «ПС ФСБ», որն էլ, հավանաբար, պատրվակ է դարձել հետագա զարգացումների համար: Այդ ընթացքում պատգամավորի մեքենայից դուրս են եկել ուղեկցող անձինք եւ սկսել նկարահանել պատգամավորի ու զինվորների երկխոսությունը: Զարուհի Փոստանջյանն ուղեկալի ավագից բացատրություն է պահանջել, թե ինչու են ռուս սահմանապահները Հայաստանի ճանապարհների վրա հսկողություն իրականացնում, ինչու են, հայ լինելով ու Հայաստանի հողում լինելով, խոսում ռուսերենով եւ այլն: Վերակարգի ավագը նախ խնդրել է իրենց չնկարահանել (եւ քանիցս կրկնել է այդ խնդրանքը), ապա բացատրություններ տվել պատգամավորին հուզող հարցերի վերաբերյալ: Այդ ընթացքում, դեռեւս չպարզված հանգամանքներում, իբր ընկել ու կոտրվել է պատգամավորին ուղեկցող անձի տեսախցիկը:

Մի քանի րոպե անց միջադեպի վայր են ժամանել ոստիկանության բաժնի պետն ու Մեղրու սահմանապահ ջոկատի հրամանատարի տեղակալը: Նրանք փորձել են պարզաբանել, թե պատգամավորը եւ ուղեկցող անձինք սահմանապահներից ինչ պահանջներ ունեն: Նրանք երկու պահանջ են ներկայացրել՝ 1) պաշտոնապես ներողություն խնդրել՝ վերակարգի ավագի՝ իբր անտակտ վերաբերմունքի համար, 2) փոխհատուցել վնասը՝ իբր սահմանապահների կողմից ջարդված տեսախցիկի համար:

Սահմանապահ ջոկատի հրամանատարի տեղակալը հայտնել է, որ զորամասի հրամանատարության անունից ներողություն է խնդրում, եթե, իրոք, ուղեկալի զինվորականները վիրավորել են պատգամավորի եւ ուղեկցող անձանց արժանապատվությունը, եւ պատրաստ է փոխհատուցել վնասը՝ ջարդված տեսախցիկի համար՝ 45-50 հազար դրամի չափով: Այնուհետեւ՝ ուղեկցողների հետ խորհրդակցելուց հետո պատգամավորը հայտարարել է, որ իրենք ուզում են ե՛ւ ներողություն խնդրելը, ե՛ւ վնասի փոխհատուցումը ֆիքսել գրավոր արձանագրությամբ… Կողմերն ընդհանուր հայտարարի չեն եկել: Ի վերջո պատգամավորը եւ ուղեկցող անձինք ճանապարհվել են Կապան: Ու քիչ հետո արդեն սոցիալական ցանցերում երեւացել են պատգամավորի հայտարարությունները ու պարզաբանումները միջադեպի վերաբերյալ:

Նույն օրը հրապարակվել է ՌԴ սահմանապահների պարզաբանումը, որում, մասնավորապես, ասված է. «Ժամը 20:00-ի շրջանում Երեւան-Մեղրի ճանապարհին կանգնեցվել է մի մեքենա, որում գտնվել է Զ.Փոստանջյանը: Զ.Փոստանջյանի փաստաթղթերի ստուգման ընթացքում վերջինս ներկայացրել է պատգամավորի վկայականը եւ կոպիտ կերպով բացատրություններ պահանջել: Սահմանապահի կողմից կանգնեցնելու վերաբերյալ բացատրությունների տրամադրումից հետո Զ.Փոստանջյանն ու նրան ուղեկցող անձինք հանդուգն պահվածք են դրսեւորել, փորձել սադրել հակահիրավական գործողություններ, հրապարակայնորեն տեսանկարահանել սահմանապահ ծառայություն իրականացնողներին: Ի հակառակ պատգամավորի պնդումների՝ սահմանապահ ծառայության աշխատակիցները տեսանկարահանման սարքը չեն կոտրել: Ավելին, դեպքի վայր է ժամանել սահմանապահ վարչության ներկայացուցիչը, ով ճշտել է դեպքի մանրամասները եւ կարգավորել խնդիրը: Այնուամենայնիվ, Զ.Փոստանջյանը եւ նրան ուղեկցող անձինք մտադրված փորձում էին նոր կոնֆլիկտ հրահրել՝ վիրավորելով սահմանապահներին: Իր գործողություններով Զ.Փոստանջյանի գլխավորած խումբը կանխամտածված խոչընդոտել է սահմանապահ ծառայության ներկայացուցիչների պարտականությունների կատարումը՝ կապված սահմանի պաշտպանության հետ՝ դրանով իսկ հանցագործի որոնման եւ ձերբակալության համար իրական վտանգ ստեղծելով: ՀՀ-ում Ռուսաստանի ԱԴԾ սահմանապահ վարչությունը ցավում է տեղի ունեցածի համար: Միաժամանակ անհրաժեշտ ենք համարում հանրության ուշադրությունը հրավիրել սահմանապահ ռեժիմի եւ սահմանի ռեժիմի կանոնների պահպանման անհրաժեշտության վրա: Սահմանի ռեժիմը բոլորի համար նույնն է՝ լինի դա խորհրդարանական կամ շարքային քաղաքացի: Այս համատեքստում ցանկանում ենք հիշեցնել Ազգային ժողովի, որի անդամ է Զ.Փոստանջյանը, կողմից ընդունված ՀՀ «Պետական սահմանի» մասին օրենքի 34-րդ հոդվածը. «Պետական մարմինները, պաշտոնատար անձինք, քաղաքացիները եւ կազմակերպությունները պարտավոր են իրենց հնարավորությունների սահմաններում աջակցել սահմանապահ զորքերին՝ պետական սահմանի պահպանման հարցում, սահմանապահ զորքերին անհապաղ հայտնել պետական սահմանին սպառնացող վտանգի մասին»»:

Իսկապե՞ս խոցելի է սահմանապահների գործողությունների իրավական հիմքը

Նման հարց, անկեղծ լինենք, երբեք չէր առաջացել: Նման հարցադրում արվեց սեպտեմբերի 25-ի միջադեպի ընթացքում եւ հետո: Առաջին հայացքից տարօրինակ ոչինչ չկա դրանում, եթե այն առաջադրի, օրինակ, Հայաստանի Հանրապետության շարքային որեւէ քաղաքացի: Բայց հարցադրումը դառնում է անհեթեթ, երբ այն հնչեցնում է ԱԺ պատգամավորը եւ առաջադրում է ոչ թե խորհրդարանում, այլ ավտոճանապարհին դրված զինվորական վերակարգում…

Որքանով տեղյակ ենք, կա առնվազն երեք միջպետական պայմանագիր Ռուսաստանի Դաշնության եւ Հայաստանի Հանրապետության միջեւ, որոնցով կարգավորվում է ռուսական զորքերի գործունեությունը Հայաստանում: Ահավասիկ՝ 1) **«Հայաստանի Հանրապետության տարածքում Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի կարգավիճակի եւ դրանց գործունեության պայմանների մասին» (30 սեպտեմբերի 1992թ.), 2) «ՀՀ տարածքում ռուսական ռազմակայանի մասին» (16 մարտի 1995թ.), 3) ««ՀՀ տարածքում ռուսական ռազմակայանի մասին» 1995թ. մարտի 16-ին ՀՀ եւ ՌԴ միջեւ կնքված համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին N5 արձանագրությունը» (20 օգոստոսի 2010թ.)**: Ընդ որում՝ վերջին փաստաթուղթը մեր հիշողության մեջ մտավ նաեւ մեկ այլ դրույթի շնորհիվ. եթե նախկինում ռազմակայանը պետք է ապահովեր ՀՀ անվտանգությունը նախկին ԽՍՀՄ արտաքին սահմանի երկայնքով, ապա այդ փոփոխությամբ ապահովվում է Հայաստանի Հանրապետության անվտանգությունն առհասարակ:

Մենք մասնագետ չենք, եւ քիչ չէ սխալվելու հավանականությունը նշված համաձայնագրերի մասին դատողություններ անելիս: Ուստի եւ ուզում ենք հարց առաջադրել հարգարժան պատգամավորին՝ արդյո՞ք նշված համաձայնագրերը լիովին չեն լուծում Հայաստանում գտնվող ռուսական զորքերի եւ, մասնավորապես, սահմանապահ զորքերի գործունեության իրավական հիմքերը: Եթե ոչ, ապա ինչո՞ւ հարցն ըստ պատշաճի չի բարձրացվել (չի բարձրացվում) երկրի օրենսդիր մարմնում: Կամ՝ արդյո՞ք պատշաճ է պետական կարեւորության այդ հարցը զինվորական վերակարգում ծառայությունն իրականացնող զինվորին ուղղելը:

Ինչ ասել է Մեղրու սահմանապահ ջոկատ

Միջադեպի առիթով վերջին օրերին տեղի-անտեղի հնչող գնահատականների ու ոչ կոռեկտ արտահայտությունների մթնոլորտում երեւի թե պարտավոր ենք ինքներս մի քիչ նեղություն պատճառել մեզ եւ վերհիշել, թե ինչ ասել է ռուսական սահմանապահ ջոկատ Մեղրիում:

Ռուս զինվորը Մեղրու տարածքում առաջին անգամ ոտք դրեց 1810թ. հունիսի 12-13-ին տեղաբնակ հայերի խնդրանքով: Այդ ժամանակ ռուսական եգերական գունդը, գնդապետ Կոտլյարովսկու հրամանատարությամբ, պարսկական զորքերին դուրս մղեց շրջանի տարածքից:

Այդ օրերից ի վեր, տարբեր կարգավիճակով, նաեւ խորհրդային տարիներին, սահմանապահ ջոկատն արժանապատվորեն իրականացրել է հայ-իրանական սահմանի պաշտպանությունը:

Անկախության հռչակումից հետո Հայաստանի իշխանություններն անհրաժեշտ համարեցին, որ Մեղրու սահմանապահ ջոկատը շարունակի պաշտպանել Իրանի Իսլամական Հանրապետության հետ Հայաստանի՝ Արաքս գետի երկայնքով ձգվող սահմանի՝ Մեղրու շրջանի ամբողջ տարածքը:

Եվ մոտ երկու հարյուր տարվա ընթացքում ռուսական (առ ժամանակ՝ խորհրդային) սահմանապահ ջոկատը դարձել է Մեղրու իրականության անքակտելի բաղադրիչը: Այսօր՝ առավել եւս:

Մեղրու պատմությամբ զբաղվող մեր գործընկերները պնդում են, որ այդ ամբողջ ընթացքում ռուս սահմանապահների ու մեղրեցիների միջեւ երբեք որեւէ միջադեպ, թյուրիմացություն կամ փոխադարձ դժգոհություն չի արձանագրվել: Ընդհակառակը՝ սահմանապահ ջոկատի զինվորն ու հրամանատարը, նրանց ընտանիքի անդամն իրենց համարել ու համարում են մեղրեցի, իսկ մեղրեցիները ռուս զինվորականին ու նրա ընտանիքի անդամին՝ իրենց երկրամասի բնակիչ: Անկախության տարիներին էլ ավելի սերտացան տեղի բնակիչների ու ռուս սահմանապահների կապն ու առնչությունները: Ռուսական սահմանապահ ջոկատը (որի զինվորների մեծ մասը ներկայումս, ի դեպ, Հայաստանի քաղաքացի է) ոչ միայն մեր հարավային սահմանի հուսալի պահապանն է, այլեւ բազմաթիվ մեղրեցիների աշխատավայրը. նաեւ տարածքում իրականացվող սոցիալական, մշակութային մի քանի ծրագրերի հեղինակը:

Եվ նման ավանդ ունեցող զորամասին, որ պատմության քառուղիներում քանիցս հայտնվել է նաեւ կրիտիկական իրավիճակներում եւ արժանապատվորեն դուրս եկել դրանից ու ապահովել մեր սահմանի անձեռնմխելիությունը՝ երբեմն մարդկային զոհերի գնով, մենք բարոյական իրավունք չունենք վարկաբեկիչ մեկ խոսք անգամ ասելու:

Բարոյական չէ նաեւ անկախ պետության քաղաքացու դիրքերից սահմանապահների հասցեին հոխորտալը, մանավանդ որ ինքներս ենք պետական մակարդակով նրանց խնդրել-արտոնել՝ պահելու անկախ Հայաստանի սահմանը:

Այո՛, անկախությունը՝ իր բոլոր բաղադրիչներով, հայ մարդու համար բացարձակ ու անսակարկելի արժեք է, բայց եւ հիշենք, որ ռուս սահմանապահն էլ կանգ-

ՆԵԼՍՈՆ ՈՍԿԱՆՅԱՆ. «Գորիսն ապրում է իր կյանքով, եւ քաղաքի առօրյան չի շեղվել բնականոն հունից»

Սկիզբը՝ էջ 2

էլ կկազմակերպենք սեպտեմբերի 29-ին: Այդ օրը նաեւ կվերաօծվի Սբ Հռիփսիմեն. տոնակատարության ուշացումը նաեւ դրանով էր պայմանավորված:

– Գորիս քաղաքում ամբողջ ամառը, կարծեք, շինարարական եռուզեռ էր: Հաճելի էր տեսնել, որ հիմնանորոգվում է քաղաքի ամենածանրաբեռնված Շահումյան փողոցը, որ այդ փողոցում, ի վերջո, մայթեր են երեւում: Ի՞նչ կարող եք ասել Շահումյան փողոցում կատարվող աշխատանքների մասին:

– 2009թ. մեկնարկեց այդ ծրագիրը, որը միտված էր Երեւան-Գորիս-Մեղրի միջպետական ճանապարհի 6կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգմանը: Այն սկսվում է Արցախյան մայրուղու խաչմերուկից եւ ձգվում մինչեւ Քարահունջի խաչմերուկ: Ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառով ծրագրի իրագործումը ձգձգվեց: Ծրագրի արժեքը 1 մլրդ 200 հազար դրամ է: 2014-ին, կարծում եմ, այդ ծրագիրը կհասցնենք ավարտին: Աշխատանքներն իրականացնում է «Ոսմար» ՍՊԸ-ն: Դուք հավանաբար տեսաք, թե ինչ եռանդով են հիմա այնտեղ աշխատում: Այնպես որ Շահումյան փողոցը եկող տարի կունենա ամբողջապես նորոգ տեսք՝ բարեկարգ մայթերով:

– Երեւան-Մեղրի միջպետական ճանապարհի՝ Գորիսով անցնող հատվածը հիմնանորոգվում է. արդյո՞ք դա նշանակում է, որ միջպետական ճանապարհը Գորիս քաղաքից հանելու վաղեմի հիմնախնդիրն իր հրատապությունը կորցնում է:

– Հարցը մնում է օրակարգում եւ կապ չունի ներկայումս կատարվող աշխատանքների հետ: Միջպետական ճանապարհը երբեւէ պետք է շրջանցի Գորիս քաղաքը, դա շատ կարեւոր հանգամանք է: Խնդիրը հավանաբար կլուծվի Հյուսիս-հարավ ավտոմայրուղու կառուցման ժամանակ:

– Իսկ հստակեցվե՞լ է Հյուսիս-հարավ ավտոմայրուղու՝ Գորիսի տարածքով անցնող ուղին:

– Տարբերակներից մեկը, որքանով տեղյակ եմ, Կապանի Վերին Խոտանանով Տաթեւ, ապա եւ Շինուհայր ձգվող ուղին է: Կա նաեւ Կապան-Դաստակերտ-Սիսիան տարբերակը, որն ամբողջապես շրջանցում է Գորիսի շրջանը, ինչը, կարծում եմ, սխալ տարբերակ է: Միգուցե ուրիշ տարբերակներ էլ կան, չգիտեմ:

– Այս ամռանը միանգամայն նոր տեսք ստացավ Գրիգոր Տաթեւացու անունը կրող հրապարակը: Ի՞նչ կասեք այդ մասին:

– Հիանալի այդ աշխատանքը սկիզբ առավ 2012 թվականին՝ Սուրեն Խաչատրյանի անձնական նախաձեռնությամբ եւ «Սյունիք-Զանգեզուր» հիմնադրամի միջոցներով: Մոտ 40 մլն դրամի գործ է կատարվել: Առաջիկայում, հուսով եմ, հրապարակում կատարվող աշխատանքները կավարտվեն:

– Կարելի՞ է ենթադրել, որ հրապարակի վերակառուցմամբ քաղաքի կենտրոնական մասը վերջնական ու ավարտուն տեսք կստանա: Ժամանակին տարակարծություններ կային, մասնավորապես, Գրիգոր Տաթեւացու հուշակոթողի կառուցման տեղի շուրջ:

– Այս դեպքում ճիշտը հարաբերական հասկացություն է: Մարդիկ արդեն հարմարվել են Գրիգոր Տաթեւացու հուշակոթողի՝ հրապարակի կենտրոնում գտնվելու իրողության հետ, եւ չեմ կարծում, որ վերակառուցված հրապարակում պետք է վերանայվի այդ հուշարձանի տեղադրության կոնկրետ վայրը:

– Մեծ հայրենականում զոհված գորիսեցիների հիշատակը հավերժացնող հուշահամալիրում եւս վերակառուցումներ են ընթանում:

– Վաղուց հասունացած հարց էր. ջրային հայելին այնտեղ ի սկզբանե չէր գործում, այդ խնդիրը լուծվել է, ջուրը բերել ենք Շորի ձորից: Կառուցվում է հուշարձան՝ նվիրված Արցախյան ազատամարտում զոհված գորիսեցիների հիշատակին: Ֆունկցիոնալ տեսակետից շատ ճիշտ էր այդ հուշարձանը Մեծ հայրենականում զոհվածների հիշատակը հավերժացնող հուշարձանի մոտ կառուցելը: Այդ նախաձեռնության հեղինակը նույնպես Սուրեն Խաչատրյանն է:

– Գորիսում Ձեզ հիմա ավելի շատ քննադատում են վերջին մեկ-երկու տարում կատարված ծառահատումների համար, ոմանց կարծիքով այդ ծառահատումները հիմնավորված քայլ չէին եւ մեծ վնաս հասցրին քաղաքի կոլորիտին:

– Սուբյեկտիվ ու ոչ մասնագիտական դիտարկումներ են դրանք: Մանկական զբոսայգում հատվել են բացառապես հիվանդ ծառերը: Անկախության փողոցում հատվել է յոթ ծառ, որից երկուսը՝ թթենի՝ քաղաքաշինության չափանիշներին չհամապատասխանող: «Հայփոստի» դիմացի սոսին խանգարում էր շենքին: Երեք ծառ էլ հատվել է Գուսան Աշոտի փողոցում, երեքն էլ չորացած էին: Որոշ ծառեր խանգարում էին փողոցներում տեղադրվող լուսամփոփներին: Եվ բոլոր հատումները կատարվել են մասնագետների հետ խորհրդակցելով, կան արձանագրությունները: Խորհրդակցել ենք նաեւ բնապահպանների հետ: Ու, ամենակարեւորը, հարյուրավոր ծառեր ենք տնկել քաղաքում:

– Քաղաքի սանիտարական վիճակի մասին չենք ուզում խոսել, դա քննարկման առանձին նյութ է. քիչ առաջ շրջում էինք քաղաքում եւ տեսանք, թե ինչպիսի տխուր վիճակ գոյություն ունի: Բայց դիտակետի մերձակայքում ստեղծված ուղղակի ամոթալի վիճակի վերաբերյալ կուզենայինք Ձեր բացատրությունը լսել:

– Տարեկան վեց-յոթ անգամ մաքրվում է այդ տարածքը, բայց... Խնդիրը հնարավոր չէ լուծել, եթե ամեն մի գորիսեցի իր պահվածքով ու գործելակերպով չսատարի մեզ: Միգուցեեւ վարչական տույժերի կիրառումն էլ կնպաստեր, որ մարդիկ կենցաղային, շինարարական աղբը չթափեին այնտեղ: Երեւի իրավապահների հետ էլ այդ հարցը քննարկենք:

– Դուք Գորիսի քաղաքապետ եք ընտրվել 2000թ.: Այսինքն՝ Նելսոն Ոսկանյանը 13-14 տարի է, ինչ ղեկավարում է Գորիս քաղաքը: Ըստ Ձեզ՝ ո՞րն է տասնչորս տարվա ընթացքում Ձեր թողած գլխավոր հետագիծը Գորիսում:

– Ձգտել եմ յուրաքանչյուր գորիսեցու մեջ սերմանել պատասխանատվության զգացում իր քաղաքի համար:

– Եվ հասե՞լ եք այդ նպատակին:

– Թող ասեն գորիսեցիները:

– Իհարկե, մենք անպայման կանդրադառնանք Ձեր 13-14 տարվա գործունեությանը, բայց այսօր ուզում ենք ճշտել՝ հնարավո՞ր է, որ Նելսոն Ոսկանյանը 2014-ի գարնանը հինգերորդ անգամ առաջադրվի Գորիսի քաղաքապետի թեկնածու:

– Ես պատրաստ եմ վերստին առաջադրվել, եթե իմ կուսակցությունը նպատակահարմար գտնի:

– Իսկ տեղյա՞կ եք, որ Գորիսում ձեւավորվում է երիտասարդական քաղաքացիական նախաձեռնություն՝ Սուրեն Խաչատրյանին գարնանը Գորիսի քաղաքապետի թեկնածու առաջադրելու նպատակով: Ինչպե՞ս եք վերաբերում այդ նախաձեռնությանը:

– Դա բազմաթիվ տարբերակներից մեկն է եւ շատ ուշագրավ տարբերակ է, բայց, խոստովանեմ, Սուրեն Խաչատրյանն արժանի է ավելիին:

Հարցազրույցը՝
ՄԱՆԵ ԴԱՎԹՅԱՆԻ
6 սեպտեմբերի 2013թ.

նած է մեր անկախ պետության սահմանում, ասել է թե անկախության պահպանման դիրքերում:

Իմիջիայլոց, Մեղրու սահմանապահ ջոկատի հրամանատարը 2011թ. ապրիլի 12-ից գնդապետ Անատոլի Շադրինն է: Տարածաշրջանի բնակչության հետ հարաբերություններում նա կարողացել է ոչ միայն պահպանել նախորդ ժամանակներում ձեւավորված բարի ավանդույթները, այլեւ նոր ջերմություն ու փոխվստահություն հաղորդել դրանց: Ոչ ոք Մեղրիում նրան օտարական կամ հյուր չի համարում: Մեղրեցիները հրամանատարին իրենցից մեկն են համարում: Երիտասարդ զորապետին տեղի բնակչության հետ կարելի է տեսնել ե՛ւ տոնական առիթներով, ե՛ւ հոգսերը քննարկելիս, ե՛ւ տխրության պահերին: Ծանոթ լինելով նրա գործելակերպին ու աշխարհընկալմանը, անկեղծ լինենք, դժվարությամբ ենք պատկերացնում, որ գնդապետի հրամանատարության ներքո գտնվող զինվորը (անկախ ազգությունից) կարող է եւ ոչ կոռեկտ վարք դրսեւորել քաղաքացիական բնակչության հանդեպ: Ինչ վերաբերում է ընտրություններին (համապետական կամ տեղական նշանակության), ապա բացառում ենք զորամասի հրամանատարության շահագրգռությունն այս կամ այն կուսակցության, այս կամ այն թեկնածուի հաղթանակի հարցում: Այդպես է եղել նաեւ նախորդ հրամանատարների օրերում. մոտ 15 տարի, որպես լրագրող, պարբերաբար եղել ենք այդ զորամասում (ինչպես եւ տարածքի մյուս զորամասերում), ու դա մեր անձնական դիտարկումն է: Այնպես որ բացառում ենք, որ սեպտեմբերի 25-ի միջադեպը կարող էր ունենալ սեպտեմբերի 29-ի ընտրությամբ պայմանավորված ենթատեքստ:

Սյունիքը չի կարող լինել հակառուսական պոռթկումների «պոլիգոն»

Մեղրի-Երեւան ավտոմայրուղում տեղի ունեցած միջադեպի վերաբերյալ արդեն իսկ ընթերցողի սեղանին են լրագրային բազմաթիվ հրապարակումներ: Դրանցում նաեւ այն միտքն է արտահայտված, թե իբր արեւմտամետ պատգամավորի (կամ այդպիսի կողմնորոշմամբ մեկ այլ քաղաքական գործչի) նման աղմուկն ու հակառուսական պոռթկումը սպասելի էին այն բանից հետո, երբ ս.թ. սեպտեմբերի 3-ին հայտնի դարձավ Հայաստանի նախագահի կողմնորոշումը դեպի ձեւավորվող Մաքսային միություն:

Նման դիտարկման քննարկումը, անշուշտ, դուրս է սույն հրապարակման շրջանակից: Սակայն չենք կարող մի փոքրիկ նկատառում չանել:

Մենք նույնպես հիացած չենք Հայաստանի վարչախմբի արտաքին քաղաքականությամբ: Կարելի էր եւ ընտրել զարգացման զուտ հայկական ուղի եւ չհայտնվել երկու հսկա ջրաղացքարի՝ Եվրամիության եւ Մաքսային միության արանքում: Բայց եթե արդեն հայտնվել ենք այդ հանգրվանում, ապա մեր խորհրդածություններն առայժմ, միանշանակ, դեպի Մաքսային միությունը պետք է լինի:

Իհարկե, մենք, ինչպես եւ Ազգային ժողովի պատգամավորներն ու հանրապետության կառավարության անդամները, խորությամբ չգիտենք, թե ինչ ասել է Մաքսային միություն կամ Եվրամիության հետ ասոցացում: Բայց հստակ գիտենք մի բան՝ Մաքսային միությունը ձեւավորվում է այն երկրների ու ժողովուրդների մասնակցությամբ ու միջավայրում, որոնց հետ դարերով ճանապարհ ենք անցել, որոնք համեմատաբար կանխատեսելի են, որոնց համար մենք նույնպես ընկալելի ենք, որոնց հետ (արժեքային համակարգի եւ հոգեկերտվածքի առումով) շատ ընդհանրություններ ունենք:

Մենք հիացած չենք նաեւ Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության համագործակցության ներկայիս կերպով: Հայ մարդը վերապահումներ ունի նաեւ հայ-ռուսական հարաբերությունների պատմության շատ-շատ հարցերում:

Այդ բոլորով հանդերձ, սակայն, չենք կարող մոռանալ, որ դարերի ընթացքում հայ եւ ռուս ժողովուրդների միջեւ ստեղծվել է իսկական բարեկամություն: Չգիտենք նույնիսկ՝ կա՞ աշխարհում մեկ այլ ժողովուրդ, որի հետ այնքան թելերով կապված լինենք, որքան ռուս ժողովրդի: Օբյեկտիվ չէր լինի նաեւ, որ ՀՀ-ի եւ ՌԴ-ի ու երկու պետության առաջնորդների համագործակցության այսօրվա կերպը նույնացնեինք երկու ժողովուրդների՝ դարերի խորքից եկող ու փորձություններով անցած բարեկամության հետ, քանզի առաջնորդները գնացող են, ժողովուրդները՝ մնացող:

Եվ եթե այսօր նույնիսկ հիմքերկան հակառուսական պոռթկումների ու հույզերի համար, ապա, հավատացեք, դրանց համար Սյունիքը չի կարող «պոլիգոն» լինել: Ճակատագրի կամոք գլխավորապես Սյունիքում են սկիզբ առել հայ-ռուսական համագործակցության, բարեկամության ծիլերը, ինչի վերաբերյալ կա որոշակի պատմական հիշողություն: Եվ ուրեմն՝ խոհեմ չէ հայ-ռուսական հարաբերությունների հերթական փորձարկմանը միտված վարժանքները Սյունիքից սկսելը:

Եվս մեկ արձանագրում

Զարուհի Փոստանջյանը նախկինում քանիցս այցելել է «Սյունյաց երկրի» խմբագրություն, հետաքրքրվել մեր գործերով: Ու միշտ էլ նրան համարել ենք (ու շարունակում ենք համարել) թերթի բարեկամը: Միաժամանակ՝ գնահատում ենք նրա դերակատարությունը հանրապետությունում քաղաքացիական հասարակության ձեւավորման ու ամրապնդման գործում, հավանություն տալիս պատգամավորի շատ-շատ քայլերի, սյունիքյան իրականության որոշ արգահատելի երեւույթների դեմ ձեռնարկած քայլերին: Հատկապես դրվատելի է նրա կատարածը Քաջարան գյուղի համար մղված «ճակատամարտում»: Բայց... Տիկին Փոստանջյանի հայտարարություններն ավտոմայրուղու միջադեպի վերաբերյալ, մեղմ ասած, ամբողջովին չեն արտացոլում իրականությունը: Առավել սուբյեկտիվ են նրա եւ «Ժառանգության» գնահատականները՝ տրված Մեղրու սահմանապահ զորամասի զինվորականներին եւ, առհասարակ, այդ զորամասի առաքելությանը: Շատ ենք ափսոսում, որ հարգարժան պատգամավորը տեղյակ չէ այդ զորամասի դերակատարությանը՝ մեր երկրի հարավային սահմանների պաշտպանության, ինչպես եւ Մեղրու տարածաշրջանի սոցիալական որոշ խնդիրների լուծման գործում: Ափսոսում ենք, որ ինքն ու ուղեկցող անձինք այդքան հեշտությամբ վիրավորանքներ են հասցրել մեր պետության սահմանները պաշտպանող զինվորներին, ովքեր, ինչպես նշեցինք, Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ էին (բացի հրամանատարից): Այդ հանգամանքների մղումով է, որ ակամա հիշեցինք հին աշխարհի իմաստուններից մեկի՝ Արիստոտելի հայտնի խոսքը. «Պլատոնն իմ բարեկամն է, բայց ճշմարտությունն ավելի թանկ է», եւ փորձեցինք առաջնորդվել դրանով: Միգուցե միասին ուժ գտնենք մեր մեջ եւ սեպտեմբերի 25-ի միջադեպի մասին խոսելիս ամեն ինչից վեր դասենք ճշմարտությունը: Իսկ քաղաքականության մասին՝ հետո եւ այլ ու պատշաճ առիթով:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Այսօրվա երկիր
www.syuniacyerkir.am

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի Ց ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ

ՇԱԲԱԹ • 5 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2013Թ • № 26 (299)

¶ð²Î²Ü êÚàôÜÆø

Տիգրան Գրիգորյանի բանաստեղծական աշխարհում

Ինձ հառաչել չթողին,
Էլ ուր մնաց շառաչել...

Համո Սահյան

...Ինչ էլ որ լինի՝
Չհիվանդանալ իմ դարի ախտով.
Նույնիսկ՝ մահանալ,
Բայց քաղաքակիրթ խարկանք
չդառնալ:

«Ապխտածություն»

Այսպես, քաղաքակիրթ խարկանքների, ասել է թե՝ կեղծը, անբնականն ու ճշմարտամերժը քաղաքակրթության քողով ծածկելու սարսափազդու, ապխտած ախտի հետ պայքարն սկսված է, եւ մարտադաշտը Տիգրան Գրիգորյանի բանաստեղծական աշխարհն է՝ **«Հավիտենության ճանապարհին»** վերնագրով:

«Ես չեմ մտնում նրա ստեղծագործական աշխարհի մեջ, - գրում է ժողովածուի առաջաբանի հեղինակ Կիմ Աղաբեկյանը, – **ես, պարզապես, գրում եմ այդ աշխարհի մասին,** – շարունակում է նա՝ վկայելով, որ «բանաստեղծական յուրաքանչյուր գործ ապրված տառապանք է՝ բյուրեղացած իբրեւ բանաստեղծական գեղեցկություն»: Իհարկե, չեմ ասի, թե գրականագետը խուսափել է մտնել նույն այդ տառապանքի ծովը, ուր կյանքի ամեհի, երբեմն՝ լպրծուն ալիքների հետ իր պայքարն է մղում բանաստեղծը: Պարզապես այդ ծովն այնքան խորն է, որտեղ մտնողը պետք է զինվի կամքի ու համբերատարության, ընդվզումի ու պայքարի նույն ոգով՝ քաջ գիտակցելով, որ փոքր այդ ժողովածուն շատ ասելիք ունի եւ արժանի է շատ մեծ ու լուրջ ուշադրության, քան մուտքի ու ողջերթի խոսքը կարող է լինել, քան տողերիս հեղինակի զգացմունքային տպավորություններն ու նրանցից ծնված կամ վերածնված սերն առ պոետ ու պոետականություն:

Տիգրան Գրիգորյանի պոետական առինքնությամբ օժտված խոսքերը հմայում են առաջին իսկ հայացքից: **«Արդարության ձայնն անկասկած խենթությունն է...» («Ցավալի իրողություն»),** - գրում է նա՝ համոզված լինելով, որ խենթերին քարկոծում են: Այնուամենայնիվ, բանաստեղծը բացում է «ախտազերծության» իր նորագույն էջը՝ դառնալով «խավարահալած լույսի» մեր ժամանակների պաշտպանը:

Սերունդների հերթափոխի մեջ վաղուց տեսանելի եւ համբուրելի սեւակյան ավելի շատ ոչ թե բանաստեղծական, այլ մարդաբանական վերլուծություններով առաջանալու ոտնահետքերն են տանում դեպի Տիգրան Գրիգորյանի բանաստեղծական աշխարհը, ուր քեզ այստեղ ուղեկցում են տողատակում հնչող եսենինյան կիթառալար ալեկոծումները սեփական բախտախաղի մասին, բայց եւ որտեղ անընդհատ զգում ես այդ խաղում տանուլ տվածի հետ չհաշտվող, չհանդուրժող հեղինակի ըմբոստ ոգու ներկայությունը: Իսկ տանուլ տվածի հետ չհամակերպվելու միակ պատճառն այն է, որ խաղի կանոններն են անարդար...

Խաղի կանոնների անարդար դրսեւորումները բացահայտող սեւակյան փորձերի մարդկային նույն բարոյական ըմբոստությամբ էր քայլելու ելել Տիգրան Գրիգորյանը: Նա, ում լսելի էին Սեւակի «Հանեցեք ձեր դիմակները», «...Լույս, լույս զվարթ» հոգեկանչերը: Տաղանդաշատ Սեւակն այնուամենայնիվ այնքան միամիտ չէր, որ չտեսներ տառապանքի հնարավոր այն գոյությունը նրանց համար, ովքեր ոչ թե «դիմակաթափ են», այլեւ, ընդհանրապես, զզվել են դիմակներից եւ չեն էլ փորձել կրել այն՝

Հակառակ կյանքի
Պարարտակուտակ կարգապահության
Ստրոսկոն փառքի՛.
Եվ ընդդեմ՝ բոլո՛ր
Նորարական թաքստոցներից
Ճահճասերների՛
Հաշվեկշռված
Կամքի վանքի՛.

«Խոստովանություն»

Տառապանքն իսկապես կարող է առավել մեծ լինել նրա համար, ում խոստովանության շարունակությունն այսպիսին է.

Հոգնած եւ բազում,
Գոռոզարարո,
Երեխայական դերերից իմ ջինջ՝
Մի մտացրիվ,
Դիմակաթափված,
Հորիզոնահար հայացքո՛վ վճիտ՝
Ես հանձն եմ առնում,
Որ անանձնական ճակատագրիս
Ողորմած ձեռքին
Եղել եմ միայն,
Գողտրիկ հույզերից
Սիրո՛վ շաղախված
Մի պարզ խաղալիք:

Բայց եւ նման սիրով, լույսով, հույզով լի շաղախից հունցված մեկի համար, իսկապես, չէր կարող ճանաչելի չլինել՝

Անդարձ որբացած
Երազանքները խկլագարների...

Տիգրան Գրիգորյանի բանաստեղծական ոգին ընդվզում ու ծառս է լինում: Նա հեշտ ու հանգիստ հանձնվողներից չէ, ուստի կարողանում է հստակորեն հայտարարել՝

...Որ անապական
Կողմնացույցի պես՝
Դարձյալ աշխարհի
Բոլո՛ր կողմերն էլ
Ճիշտ եմ ցույց տալիս:

Ճշմարիտ բանաստեղծների կոչման, նրանց անցնելիք ստեղծագործական դժվարին ճանապարհի, նրանց առաքելության մասին Պարույր Սեւակը մի կարճ, բայց շատ տարողունակ խոսք ունի: **«Գրել, նշանակում է կռվել չարի դեմ»**, – ասում է նա:

Սեւակն այսօր էլ չի դադարում ասել այդ մասին, որովհետեւ կյանքն իսկապես շարունակում է «ախտազերծման» կարիք ունենալ, եւ ախտազերծողների շարքերում մեծ է բանաստեղծների առաքելությունը: Խոսքը ճշմարտության դեմքը ծածկող քողը ետ տանող բանաստեղծների մասին է, ովքեր չեն երկնչում եւ չեն ծնկում կեղծիքի ու անարդարության առաջ:

Կյանքն ախտազերծող բանաստեղծների բանակ էր ուզում տեսնել նաեւ հայոց բանաստեղծության մի ուրիշ գագաթ ու մեծություն՝ Եղիշե Չարենցը, սակայն հանդիպել էր այլ որակներ ունեցող բանակի.

Երգում է, գնա, գիշեր ու զոր,
Պոետների մի ողջ բանակ...
...Շատ է չնչին մեր ապագան,
Թե որ դրանց երգին նայես...

Տիգրան Գրիգորյանը դեպի Պառնաս ձգտող այդ բանաստեղծների շարքում չէ: Նա կյանքի հորձանքում ժայռի պես ամուր կանգնած այն անհատականությունն է, ով, բաց ճակատով նայելով հավիտենություն տանող ճանապարհին, խոստովանում է՝ «Պոետները թմրադեղերն են եղել իմ»: Նրա խոսքն իհարկե «Պառնասում ծնկած այծերի» մասին չէ, այլ ճշմարիտ ու հոգեհարազատ այն պոետների, ովքեր սեփական հոգու բանաստեղծական կանչը համամարդկային իմաստուն խոհերի միջով դեպի իսկական պոեզիային հատուկ հոգի գերեվարող կատարելության կախարդանքն են տանում: Հենց հոգու այդ կանչով է, ինչպես խոստովանում է բանաստեղծը, «Հավիտենության ճանապարհին» ժողովածուի իր թարգմանությունների բաժինը ներկայացնելիս, նա «վերապրելով վերածնվել» եսենինյան պոեզիայի խորքերում:

Չկարողանալով զսպել իր ըմբոստությունները կյանքի պարտադրած խորդուբորդ ճանապարհներին եւ ուղիղ նայելով մարդու մեջ նստած գազանի աչքերին, բանաստեղծը ջանում է գոնե ինքն իր համար հասկանալի դարձնել կյանք կոչվող եռուզեռի պատճառահետեւանքային կապերը: Այս անգամ, սակայն, երբեմն գլուխ է բարձրացնում տարակուսանքը.

«Ախր, չէ՞ որ
Այս ճպճպան լռության մեջ
Ոչ որ էլ իր անուշ քնից
Ամենեին էլ
Դժգոհ չէ.
Մի՞թե միայն
Ինձ պես ժլատ հաճախորդի՝
Արդարության
Գոյությունն է ավելորդը...»:

«Տարակուսանք»

Արդարությունն այո՛, ժլատ հաճախորդ է, սակայն տարակուսանքից ծնված ինքնամերժումի խոսքն այստեղ ոչ թե նվնվոց, այլ ուժերը հավաքելով ոտքի վրա մնալու ջանքի ու եռանդի արգասիք է:

Ինչեւէ: Պոետականությունը Տիգրան Գրիգորյանի կյանքի ընթացքն է եղել դեռ շատ վաղուց: Հիվանդ լինելով պոետականության թմրադեղի պես ձգող հիվանդությամբ, մանչուկի պես հափշտակված՝

...Յանկացել է նրանց երկնած
Մաքրամաքուր ձիգ կատարին
Հասնել... կյանքում:

«Անփերության գահին»

Տարակուսանքների ու ինքնամերժումի տատասկոտ ճանապարհով է ընթացել բանաստեղծը, որը ոչ թե տարել է նրան դեպի նիհիլիզմի խոր անդունդները կամ մաղձոտ թույներով ինքնախայթումները, այլ այնտեղ, ուր ականջի տակ շշնջացող Նիկոլայ Ռուբցովի հոգեհարազատ ձայնն է.

Վաղո՛ւց է հոգնել, թափառել անհույս
Հնոտվոր սիրով ապրող իմ հոգին,
Շատ վաղուց էր պետք հասկանալ,
որ ես
Շատ եմ հավատում սուտ պատրանքներին:

Բայց միեւնույն է՝ դու փորձիր հիմա
Վերջ տալ տխրությունդ իմ տեսիլքներին,
Ջութակներն, ասես, լալիս են միայն
Դալուկ լճափի ու սիրո մասին:

թարգմ. Տ. Գրիգորյանի

Այսպիսի անեղծ ապրումների ակունքներից է իր ուժը, լույսն ու ջերմությունն առնում Տիգրան Գրիգորյանի բանաստեղծական աշխարհը: Այստեղ են նրա անսեթեւեթ հուզաշխարհի արմատները, որոնց շնորհիվ էլ նա կարողանում է հայտարարել.

Մինչ ուղնուծուծն իմ ես բանաստեղծ եմ...

Վաղուց եմ թքել Պառնասում ծնկած
այծերի վրա...

«Անարժեքության հեղձուկի մեջ»

Ճշմարիտ բանաստեղծները կյանքի փառատենչ «պարարտակուտակ կարգապահության» ճահիճը ճեղքող եւ վեր խոյացող անհատներ են, որոնց խոյացումների տակ, իսկապես, ծփում է լուսավոր մաքրությունը: Եվ եթե փորձես կռանալ ու ափով ետ տանել լեռնային վտակների երեսին ջրի հետ ճամփին խառնված չոր խոտ ու տերեւի մնացորդները՝ որպես պարտադրյալ տառապանքի ծայներ, ապա կարող ես խմել զուլալված, լուսավոր վտակից՝ ըմբոշխնելով նրա մաքրությունը: Հենց սա է Տիգրան Գրիգորյանի պոեզիան բնորոշողը, եւ հենց սա է նրան Նիկոլայ Ռուբցովի պոեզիայի հետ հոգեհարազատորեն կապողը.

...Կարծես ժամանակն այստեղ գործ
չունի,
Թող կողքիս ոչ մի բանից չխոսեն,
Եթե հնչում է թախծոտ մեղեդի...

թարգմ. Տ. Գրիգորյանի

Ժամանակի պարտադրած ախտերն ու աղտեղությունները, պայքարի հոգնությունները ի չիք են դառնում, երբ ջութակները երգում են մորեմերկ մաքրության մասին:

...Եվ այսպես շարունակ, մինչեւ ընդվզումի եւ ինքնամերժումի, լիարժեքության եւ անլիարժեքության պայքարի դաշտում մղած կռիվների արդյունքում կրկին վեր բարձրացող հաղթանակի դրոշ, որի վրա գրված է՝

Ես ընդամենը
Հավիտենության կամակատարն եմ:

«Բանաստեղծություն»

Իսկապես, նա կարող է լինել հավիտենության զինվորագրյալը, ով ընդունելով ճակատագրով իր դատապարտվածությունը որպես «Գողտրիկ հույզերից սիրով շաղախված մի պարզ խաղալիք», այնուամենայնիվ, անկոտրում համարձակությամբ եւ ինքնավստահորեն հայտարարում է իր դիրքորոշումը՝ կողմնացույցի պես աշխարհի բոլոր կողմերը ճիշտ ցույց տալու մասին: Դիրքերը չլքելու մարդկային վճռակամություն է սա, որ ավելի վեր է, քան եսասիրությունն ու սնափառությունը, որոնց մասին այստեղ խոսք լինել չի կարող:

Կյանքի դրամատիկ իրավիճակներում, մարդաբանության մեջ մարդու էության ներդաշնակությունը պահող եզրերի փնտրտուքով զբաղված, Տիգրան Գրիգորյանը բանաստեղծության հոգեկանչին ունկնդիր՝ ճշմարտությունը ցույց տվող կողմնացույց է դառնում, երազում, սիրում, հավատում, արտասվում, ապա թքում ինքն իր արցունքի վրա՝ պոետական անխառն հիվանդությամբ տառապելով՝ դատապարտված լինելով սիզիփոսյան գոյության:

Արդարության ձայնի հետ ճամփա գնացողների տառապանքը հիրավի սիզիփոսյան աշխատանք է, որովհետեւ նույն ձայնի հետ ցած ես գլորվում հենց այն պահին, երբ թվում է, թե հասել ես նպատակակետ բարձունքին:

Սիզիփոսյան այդ վեր ու վարերի մեջ Տիգրան Գրիգորյանը եկել է այն համոզումին, որ՝

Արդարության ձայնն անկասկած,
Խենթությո՛ւնն է...

Դժբախտաբար,
Ոչ միշտ է նա կարողանում
Հասկանալի լեզվով խոսել:

«Ցավալի իրողություն»

Իսկապես, ցավալի է իրողությունը: Ցավալի է այն, որ խենթերին պատժում են, մերժում, արհամարհում...

Իբրեւ մերկ ճշմարտության նվագարանի վրա ձգված լար, եւ կամ երգասացը՝ նույն ճշմարտության: Ահա թե որն է Տիգրան Գրիգորյանի պոետական պահվածքը: Կիթառահարի կրքոտությամբ է նա խփում հոգու նվագարանին, եւ հատիկ-հատիկ հնչում են երգերն այն մասին, թե ետմահու երջանկության տարածքը Հայրենիք է կոչվում («Ավետիս»), թե բարության առաքյալը լինելու պահանջը հավատի հրի մեջ տապակվել է նշանակում («Համբարձվելու զգացողություն») եւ այլն, եւ այլն... Կիթառալար հնչյունների միջից, ապա վեր է բարձրանում բանաստեղծի «Հանապազօրյա աղերսը».

Յերկնքդ՝ լույս լինի,
Երկրո՛ւ՝ հույս լինի,
Գիշերը՝ կանչ...

Քեզ ականջ դնող լինի,
Աստղաստղո՛ղ... ու հող լինի,
Բիլ անրջանք...

Հոգիդ՝ անքնո՛ւ լինի,
Հավատդ՝ շնո՛ւ լինի,
Կյանքդ՝ հորձանք:

Խաղաղ գոյության փնտրտուքներն առավել դրամատիկ են դարձնում կյանքային իրավիճակները: Դրամա, որովհետեւ խախտված են բնությունից մարդուն տրված բարոյական ներդաշնակության բոլոր կանոնները: «Ժամանակները ձյութված են տմկած սովորույթների ձանձրույթով» եւ՝

Անո՛ն ինքնարուխ,
Հոգառատ, վեհ քայլ՝
Սուտ ասպետության ցուցարարություն...

«Ես իմ ողջ կյանքում...»

Իրավիճակը դրամատիկ դարձնող «չինովնիկական մաքսագներ» կան, որոնցից անտեղյակ նորարարն ու իր մտքի թռիչքի ետեւից գնացողը աճպարարի է նմանվում:

Սա խոսում է նույն բանի մասին, ինչ Դանթե Ալիգիերին՝ իր «Աստվածային կատակերգությունում», երբ ասում է՝

Երկրային կյանքս կիսով չափ անցած՝
Ես հայտնվեցի մի մութ անտառում...

Երկրային կյանքի մութ անտառների մեջ եղած-չեղածը որոշակիացնելով, ներդաշնա-

29 êºäîºØ´ºðÆ 2013Â.

Պատգամավորի թեկնածու Արմեն Կարապետյանի ելույթը Կապանի հանրահավաքում

ԱՌԱՆՑ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ

Սիրելի՛ կապանցիներ, հարգելի՛ ղափանցիներ, ես ծնվել, մեծացել եմ այս քաղաքում: Իմ մանկությունը, իմ երիտասարդությունը եւ այսօր էլ շարունակում եմ ապրել այս քաղաքում: Քաղաքի լավ տարիներին, վատ տարիներին ես ապրել եմ ձեզ հետ միասին այս քաղաքում: Ոչ մի անգամ ոչ մի առիթով չեմ լքել մեր քաղաքը: Բացառապես խորհրդային բանակում ծառայելու ժամանակ եւ մայրաքաղաքում բարձրագույն ուսումնական հաստատությունում սովորելու ժամանակ: Ես ապրել եմ այս քաղաքում, աշխատել եմ տարբեր բնագավառներում, տարբեր պոստերում եւ բոլոր աշխատանքներում կարողացել եմ ինչ-որ չափով օգուտ տալ այս քաղաքին: Ինչպիսի ձեռնարկություններ էլ ես ղեկավարել եմ, կարողացել եմ այնպես անել թե հանրապետության եւ այդ գերատեսչությունում, եւ Սյունիքի մարզում ապացուցել, որ մեր կապանցիները, մեր սյունեցիները ընդունակ են լավ աշխատելու եւ այդ աշխատանքը միշտ ես ներկայացրել եմ հանրապետության համապատասխան գերատեսչությունը: Ես աշխատել եմ շատ ավելի գազի բնագավառում: Գազի տնտեսության մեջ աշխատել եմ ամենից փոքր պաշտոնից եւ վերջում հասել գազի տնտեսության ղեկավար Սյունիքի մարզում: Ես հիշում եմ եւ մեր գազի աշխատողները բոլորը հիշում են իմ կարելի է այսպես ես վստահ եմ եւ իրավունք ունեմ իմ բարեխիղճ աշխատանքի շնորհիվ հասել եմ այն աստիճանի, միշտ Սյունիքի գազի գազամատակարարման մասնաճյուղը արժանացել է միշտ շնորհավորանքների եւ գնահատականների: Ոչ մի անգամ թույլ չեմ տվել մեր աշխատողները այստեղ հավաքված են գազի աշխատողները թեկուզ ամսվա մեջ մեկ օր ուշացվի իրենց աշխատավարձը: Առաջին հերթին ձգտել եմ կոլեկտիվում պահպանել այնպիսի մթնոլորտ, որ մարդիկ զգան եկել ենք աշխատանքի աշխատելու եւ իրենց ընտանիքը պահելու համար: Եվ սա է, որ Սյունիքի մարզի ղեկավարության կողմից գնահատվել է եւ ինձ առաջադրել են Կապանի քաղաքապետ 2002թ.: Մենք բոլորս ապրել ենք քաղաքում. այստեղ բոլորը հիշում են 2002թ., ես ընտրվելով քաղաքապետ ես կարող եմ արդեն ասել դուք բոլորդ էլ գիտեք՝ շատ վատ վիճակում էր մեր քաղաքը: Դա իհարկե ոչ թե ինչ-որ մարդկանցից էին կախված, այլ ընդհանրապես կարելի է ասել Խորհրդային Միությունից փոխանցման ժամանակ չէին հասցրել, որ կարողանան վերանորոգման բարձր աշխատանքներ կատարել մեր քաղաքում, հատկապես ասֆալտապատման աշխատանքներ, փողոցային լուսավորության աշխատանքներ, տանիքների աշխատանքներ, վերելակների վերանորոգման աշխատանքներ եւ անմիջապես 2002թվականից սկսել եմ ձեռնամուխ լինել այդ աշխատանքները իրականացնելու համար: ….Այդ քարոզարշավի ժամանակ ես հանդիպելով մարդկանց, լսել եմ մարդկանց եւ զգացել եմ, որ իրականում մարդիկ այնպիսի խնդիրներ են բարձրացնում սոցիալական, որ անմիջապես պետք է լուծում տալ: Ես եղել եմ 2002թ. նոյեմբեր ամսին Մելիք Ստեփանյան մի շենքում, 9-հարկանի շենքում: Ես ասեմ, որ տանիքը այնպիսի անմխիթար վիճակում էր, որ 9-րդ հարկից մինչեւ 2-րդ հարկը կարելի է ասել, որ վերացված է եւ 9-րդ 8-րդ հարկերում ընդհանրապես մարդ չէր ապրում: Իմ առաջին գործը հենց դա է եղել, որ այդ տանիքը վերանորոգել են: Եվ սկսած այդտեղից արդեն վերանորոգել են 100-ից ավելի տանիքներ են վերանորոգել: 150 վերելակներից 120-ը 2008թ. արդեն աշխատում էր: Ես որ ընտրվել եմ, 7 վերելակ էր աշխատում Կապան քաղաքում: Ասֆալտապատման աշխատանքներ են կատարել, շատ աշխատանքներ են կատարել: Փողոցային լուսավորություն ենք անմիջապես վերականգնել Կապան քաղաքում բարձրակարգ ափսե լուսամփոփներով: Այսքանը ինչի՞ եմ ասում: Ես ինձ իրավունք եմ վերապահում սա ասելու ձեր առաջ: Դուք գիտեք, որ ես սա արել եմ: Այդ աշխատանքները, որ ես թվարկում եմ, այս ամենը կատարել եմ: Հենց այնպես աշխատանքներ չի, որ ես ասեմ մտքներում ասեք Կարապետյան Արմենը այդ աշխատանքները չի կատարել, բայց այստեղ հայտարարում է: Ոչ, դուք բոլորդ ձեր մտքներում, ձեր դեմքերին տեսնում եմ, որ բոլորդ զգում եք, որ ես ճիշտ եմ ասում: Շատ ծանր ժամանակահատված էր եւ այդ ծանր ժամանակահատվածում կարողացել եմ այդքան աշխատանքներ կատարել: Իհարկե կարող եմ այն էլ ասել, որ բոլոր խնդիրները չեն վերացել եւ եթե ձեզնից որեւէ մեկը լիներ քաղաքապետ, նույն վիճակում կլիներ: Հնարավոր չի, որ մի ընտրաշրջանում կամ երկու ընտրաշրջանում կամ ընդհանրապես ոչ մի անգամ հիմնախնդիրները չեն վերանում: Ես հիշում եմ, որ Արամ Մանուկյան թաղամասում Ազգային ժողովի ընտրություններին հանդիպել ենք այդ տարածաշրջանի մարդկանց հետ, իրենք ասել են, որ մեր թաղամասում ոչ մի բան պետք չի, միայն թե միայն կենցաղի շենք կառուցեն: Մենք կառուցել ենք այդ շենքը: Բայց այսօր ես հանդիպման եմ գնացել այդ նույն տարածաշրջանը 10-ից ավելի հիմնախնդիրներ են բարձրացրել: Ես կես կատակով ասել եմ՝ հիշում եք այն ժամանակ որ ես եկել եմ, ասել եք ընդամենը մեր թաղամասին մի բանա պետք՝ կենցաղի տուն, ուրիշ ոչ մի բան պետք չի: Ժողովուրդը

Շարունակությունը՝ էջ 8

Ոչ մրցակցային ընտրություն №38 ընտրատարածքում

Կապանում ու Մեղրիում արձանագրվեց ընտրողների՝ վերջին տարիների համար աննախադեպ պասիվություն

Սկիզբը՝ էջ 2

Կապանի ճանշինին (տնօրեն՝ Արարատ Կարապետյան) տրվող պատվերները հնարավորինս փախցնելու համար, ինչը դեռեւս չի հերքվել: Արարատ Կարապետյանը, սակայն, վեր կանգնեց այդ ամենից եւ ամենաակտիվ մասնակցությունն ունեցավ ընտրական գործընթացին, ինչը եւ որոշիչ գործոն դարձավ:

Մի հարց եւս, որ քննարկվել ու քննարկվում է առ այսօր. ո՞վ եւ ի՞նչ հանգամանքների մղումով կամեցավ Արմեն Կապապետյանին պատգամավոր դարձնել առաջիկա երեք տարվա համար: Այդ կապակցությամբ շրջանառվում են բարձրաստիճան տարբեր պաշտոնյաների անուններ: Մյուս կողմից, ինչպես ասացինք, Արմեն Կարապետյանի թեկնածությունն իդեալական տարբերակ էր Մաքսիմ Հակոբյանի տնեցիների համար: Ամենակարեւորը՝ նա երբեք չի համարձակվի սեփական կարծիք հայտնել, եթե այդ կարծիքը համահունչ չլինի մաքսիմյան մտածումներին: Նախընտրական շրջանում թեկնածուն հասցրեց ապացուցել դա՝ տեղի-անտեղի խոսելով Սյունիքում նոր հանքավայրերի շահագործման, համայնքների խոշորացման մասին: Արմեն Կարապետյանի առաջադրումը, ըստ մարզկենտրոնում շրջանառվող այլ վարկածի, ուղեկցվել է մեկ ուրիշ գործարքով՝ «Ոսկե Կապանի» փոխհատուցմամբ: Կողմերը, սակայն, առայժմ չեն արձագանքել այդ խոսակցությանը:

ՀՀԿ-ի թեկնածուի հաղթանակն ապահովելու համար ակտիվ վարժանքներ կատարեց գործող մարզպետը: Մի քանի անգամ խորհրդակցություններ անցկացրեց, երբեմն նույնիսկ ջղայնանալու եւ հուզվելու տեսարաններ բեմադրեց…

Առավել ակտիվ էր Մաքսիմ Հակոբյանը. շրջում էր բնակավայրից բնակավայր, խոստումներ տալիս, ժպիտներ բաժանում, համայնքների լիդերների հետ խորհրդապահական զրույցներում պարզաբանում, որ Արմեն Կարապետյանի խնդիր առհասարակ բնության մեջ գոյություն չունի, օրակարգում միայն ու միայն Վահեի խնդիրն է…

Այդ ամենի արդյունքում, սակայն, սեպտեմբերի 29-ին ընտրողները վերջին տարիների համար աննախադեպ պասիվ մասնակցություն ունեցան քվեարկությանը: Ասվածը հավաստող մի քանի փաստ՝ քվեարկությանը մասնակցեց ընտրողների 50.3%-ը (50370 ընտրողից՝ 25349): Ընդ որում՝ Կապան քաղաքում՝ 30460 ընտրողից քվեարկությանը մասնակցեց 13214-ը (43.4%), Քաջարան քաղաքում՝ 3502 ընտրողից՝ 2560-ը (73.1%), Մեղրիում՝ 3549 ընտրողից՝ 1508 (42.5%), Ագարակում՝ 3551 ընտրողից՝ 2237-ը (63.0%): Անտարբերությունը, ինչպես տեսնում եք, առավել ակնհայտ էր Կապան եւ Մեղրի քաղաքներում: Կապանում, որքան էլ զարմանալի է, մասնակցության ցուցանիշը զիջեց անկախության տարիների բոլոր ընտրությունների ժամանակ արձանագրված ցուցանիշին: Նախորդ տարվա ընտրությունների համեմատ (ՏԻՄ ընտրություններ եւ ԱԺ մեծամասնական ընտրություն) մասնակիցների թիվը Կապանում նվազեց մոտ 5 հազարով, որոշ չափով նվազեց նաեւ ՀՀԿ-ի ընտրական ռեսուրսը:

Մոտ 3500 ընտրող ունեցող Մեղրի համայնքում 2012-ի ընտրությունների համեմատ հազարով պակասեց ընտրության մասնակիցների թիվը:

Սեպտեմբերի 29-ի ընտրությունն աչքի ընկավ նաեւ պասիվ քարոզարշավով, նախընտրական ծրագրերի ու դեբատների բացակայությամբ: Որոշ չափով ուշագրավ էին (մի քանի առումով) քարոզարշավի վերջին օրվա կապանյան հանրահավաքները: Առավել ուշագրավ էր ՀՀԿ-ի թեկնածու Արմեն Կարապետյանի հանրահավաքային ելույթը, որը, ամեն ինչից զատ, լուրջ ներդրում էր հայ ֆոլկլորում, ինչը սույն համարում (էջ 7-8) առանձին հրապարակվելու պատվին է արժանացել:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Կության խախտված կողմերը լույսի տակ բերելով՝ Տիգրան Գրիգորյանն իր այն մտահոգությունն է առաջ քաշում, թե՝ հանկարծ շատ ուշ չլինի, եւ մենք՝ ուշացած:

«Ճահճատենդ» բանաստեղծության ընթերցումն իրավունք է տալիս ինձ հայտարարել, որ Տիգրան Գրիգորյանը շատ հանգիստ կարող է փոխել Դանթեի արտահայտության ընդամենը մեկ բառը՝ դրանով իսկ ոչ թե կրկնելով նրան, այլ ուշադրություն հրավիրելով այն հանգամանքին, որ իր բարձրացրած հարցը համաշխարհային ճիշտ եւ ճիշտ նույն նշանակությունն ունի, ինչ Դանթեի խոհերն են՝ մարդու եւ հավիտենության մեջ նրա ունեցած տեղի մասին:

Երկրային կյանքս կիսով չափ անցած՝
Ես հայտնվեցի ճահճապտենդում...

Հենց այդպես կարող է ասել Տիգրան Գրիգորյանն իր բանաստեղծությունը սկսելուց առաջ՝ ավելի պարզորոշ դարձնելով այն, որ նրա «Ես»-ն ընդհանուրի իմաստն ունի եւ վերաբերում է մեզ՝ բոլորիս: Մենք բոլորս հիվանդ ենք այս նույն տենդով.

Կյանքը՝ կեղծիքի մի կո՛ւռ սովորույթ:
Արդարությունը շատ ուշ է գալիս:
Ճշմարտությունը՝ հորած ավանդույթ՝
Հոգեհացին են բո՛ւռ-բուռ շաղ տալիս...

Մենք բոլորս հիվանդ ենք այս տենդով, սակայն Տիգրան Գրիգորյանն է, որ անհաշտ է մեզ պատուհասածի հետ.

Հնում ինձանից: Այս ի՞նչ արգունք է:...
Մի՞թե աճյունս հողին են տալիս...
Կանգ առ, սատանա՛: Հոգին ինձ հետ է:
Ավտոդերն էլ անհո՛ւն թախծից են լալիս:

Բանաստեղծական նման պատկերների, փոխադրությունների վարպետորեն արված մեջբերումները վկայում են Տիգրան Գրիգորյանի կողմից կյանքն իր բոլոր կողմերով ընկալելու եւ ընկալածը բարձրաձայնելու մասին՝ ի շահ արդարության, ճշմարտության, ազատության, ներդաշնակության ու խաղաղության հարատեւության:

Բանաստեղծի իր կոչման, պոետների շարքում իր ունեցած առաքելության եւ նույն այդ առաքելության դժվարանցելի ճանապարհի մասին առավել քան անմիջական ու տիպական պատկերներով է ներկայացրել հենց ինքը՝ Տիգրան Գրիգորյանը.

Ես պոետ չեմ:
Ես ներդաշնակ մահն եմ կյանքի:
Կամ որ նույնն է,
Եթե ասել՝
Թե արքան եմ պոետների:

«Անփերության գահին»

Ճշմարիտ պոետներն իսկապես իրենց միջով են անցկացնում կյանքի, մահվան ու անմահության գոյաձեւերը, որպես մարդ անհատին անհրաժեշտ եռամիասնության պարտադիր պայման: Տիգրան Գրիգորյանի դեպքում՝ կյանքի հրով անցած են «Ես ներդաշնակ մահն եմ կյանքի» խոսքերը, ուստի եռամիասնության մեջ գործող ներդաշնակության համաձայն՝ մահվանից հետո սկսվում է անմահությունը: Արքա պոետներին հասու ճանապարհ է սա, որի գահը ոչ թե գրասենյակներում կամ դահլիճներում է, այլ՝ «Երկնավորի» մոտ...

Կյանքի վեր ու վարի, աջ ու ձախի ճիշտ կենտրոնում կանգնած ժամապահի նման պոետական հոգին արեւերես հանած Տիգրան Գրիգորյանը ասես խեղդվում է նույն ճամփաբաժիններում կուտակված հեղձուկի մեջ:

Սեփական ես-ի հետ անհաշտ բանաստեղծի հոգու տվայտանքները հեղձուկի ծովից ափ դուրս գալու համար ելքեր են փնտրում, սակայն, իզուր ու իզուր...

Այս կյանքում ինձնից պրծնել չկա՛...
Ինքս էլ, ավա՛ղ, չեմ կարողանում լքել
ոչ մնկին...
Մի երեւելի հիմա՛ր եմ անկամ,
Որ չփորձեցի երբեւէ կյանքում փոխել
իմ հոգին:

«Անարժեքության հեղձուկի մեջ»

Փոխել հոգին, կնշանակեր՝ կուլ տալ քաղաքակրթության սփռած անբնական ու ճշմարտամերժ խայծը: Եվ բանաստեղծը ձեռնոց է նետում ինքն իր դեմքին, ինչպես հեռավոր երկրում իրեն հոգեհարազատ մի այլ պոետ գիշերաժամի տվայտանքներից ազատվում է՝ ձեռնափայտը շպրտելով իր կյանքի տաժանելի գիրքը թերթել ստիպող սեփական ես-ի վրա: **«Հասարակ եւ ուրախ երեւալն անկասկած, / Ամենակատարյալ մեծ արվեստն է կյանքում»** (Ս. Եսենին, «Սեւ մարդը», թարգմ. Տ. Գ.): Սեւ մարդու հիշեցումները չեն զիջում իրենց տեղը բանաստեղծի խնդրանքին, թե՝ **«Բարեկամ, բարեկամ, ես հիվանդ եմ անչափ...»**, եւ ահա ջարդվում է հայելին՝ իր վրա նետված ձեռնափայտի հարվածից:

Պոետական նույն հիվանդությամբ է տառապում Տիգրան Գրիգորյանը, ով ամեն անգամ, երբ «գոյության խաղաղ մի ձեւ գտնելու» ընթացքն է բռնում, նրա ետեւից «... ժայթքման պատրաստ ընդերքն է եռում», ավարտվելով՝ «Արժանապատվությունը փորձանք է» եզրակացությամբ:

Կռիվ են տալիս բանաստեղծն ու մարդը, բնականն ու անբնականը, լույսն ու ստվերը... Անվերջ կռիվների այդ հորձանուտում, միեւնույն է, իր մնայուն մաքրության մեջ ապրում ու շարունակվում է **«Անմահության համանվագը»՝** իր նախնական անմեղությամբ հանդերձ...

ՖԵԼԻՔՍ ԲԱԽՉԻՆՅԱՆ

Սյունյաց երկիր
www.syuniacyerkir.am

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի Ց ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ

ՇԱԲԱԹ • 5 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2013Թ • № 26 (299)

Պատգամավորի թեկնածու Արմեն Կարապետյանի ելույթը Կապանի հանրահավաքում

ԱՌԱՆՑ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ

Սկիզբը՝ էջ 7

հասկացան, եթե մենք ապրում ենք, միշտ էլ հիմնախնդիրներ լինելու են: Հարգելի ժողովուրդ, իմ աշխատած տարիների 2002-2008թթ. քաղաքապետարանի բյուջեն միշտ պայքարել ենք ավելացնելու համար: Բայց միշտ էլ իմացեք, այսօր էլ հնարավոր չի քաղաքային բյուջեով կատարել այն աշխատանքները, ինչը որ գոյություն ունի մեր քաղաքում: Ինչ հիմնախնդիրներ որ գոյություն ունի մեր քաղաքում: Ես կարողացել եմ ստեղծել այնպիսի հիմքեր եւ այնպիսի փաստաթղթեր, որ կարողացել եմ ներկայացնել այն ձեռնարկությանը, որը միշտ աջակից է եղել մեր քաղաքին: Ես ձեզ կարող եմ ներկայացնել, որ քաղաքի այդպիսի աշխատանքները, որը ես կատարել եմ այդ տարիներին, 80 տոկոսը կատարվել է Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի հաշվին, ֆինանսների հաշվին: Բայց դա միշտ չի կատարվում: Այդտեղ էլ այդ ղեկավարությունը միշտ էլ տեսնում է: Եթե հիմքեր կան, այնպես ներկայացնես, այնպիսի փաստաթղթեր է ներկայացվում, որ իրականություն է դառնում իրոք արժանի է այդ աշխատանքը կատարելու: Միշտ աջակցել է այդ կոմբինատի կողմից: Ինչի՞ եմ սա ասում: Հարգելի ընկերներ, այսօր իմ թեկնածությունը ես համաձայնելու ես եթե մենակ լինեի ես չէի առաջադրվի: Մենք թիմով ենք առաջադրվում: Եվ թիմով պետք է աշխատենք: Ես 2002-2008թթ. համար առիթ չի եղել, որ շնորհակալություն հայտնեմ կոմբինատի ղեկավարությանը այս բազմաթիվ մարդկանց առաջ շնորհակալություն եմ հայտնում Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատին այդ տարիներին մեծածավալ աշխատանքներ կատարելու Կապան քաղաքում՝ հանձինս պարոն Հակոբյանիկ՝ Մաքսիմ Անուշավանիչին, որը միշտ հետեւողական է եղել այս մեր տարածաշրջանին եւ եթե մենք ինչ որ բան պետք էր գալիս մեր ուղղությունը դեպի Քաջարան էր: Իհարկե մենք պայքարում էինք, որ կառավարությունից գումարներ տեղափոխել Կապան քաղաք: Բայց դա շատ դժվար էր, որովհետեւ դուք լավ գիտեք հանրապետության վիճակը: Կառավարությունը ի վիճակի չէ բոլոր մարզերում այնպիսի հիմնախնդիրներ լուծել, որը առկա է: Մեր կառավարության խնդիրներն էլ շատ-շատ են: Այնուամենայնիվ մեր կառավարությունը շատ ժամանակ ուղղակի մեզ ասում էին ինձ ասում էին որպես քաղաքապետ գոնե դու բարվոք վիճակում ես, որ գոյություն ունի Քաջարանի կոմբինատ: Ձեր բյուջեն կարող է համալրվել Քաջարանի կոմբինատից: Այս առիթով չի առիթ չի եղել ես շնորհակալություն եմ հայտնում Մաքսիմ Անուշավանովիչ ձեզ: Սիրելի ղափանցիներ, բոլորը ձեզնից է կախված: Հիմա արդեն ժամանակն է, որ դուք հնարավորություն տաք, ես արդեն ասացի, ես մենակ չեմ այս աշխատանքում: Թեկնածուն մենակ չէ, թիմ է ներկայացնում: Այդ թիմը նորանշանակ մարզպետ Վահե Հակոբյանն է, Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի տնօրեն Մաքսիմ Անուշավանովիչը, որը հանդիսանում է թիվ 38 ընտրատարածքի շտաբի պետ: Մենք պետք է ստեղծենք այնպիսի հնարավորություններ, որ կարողանանք շարունակել մեր քաղաքում արժանավայել ապրել: Ես հասկանում եմ, հիմնախնդիրները այն չէ, որ մենք անմիջապես վերացնենք: Այնպես չէ, որ ես ընտրվեմ գնալու եմ ձեր հիմնախնդիրները վերացնեմ: Բայց այսպիսի մի խնդիր կա հատկապես կապանցիներին: Այս ընտրատարածքը ընդգրկում է Կապան իր գյուղերով, Քաջարան իր գյուղերով, Ագարակ իր գյուղերով, Մեղրի իր գյուղերով: Ես ծնունդն եմ Կապան քաղաքի:

27 սեպտեմբերի 2013թ.

ՈՐՈՏԱՆ

Երբ դու ժպտում ես մառախուղի մեջ նիրհող արևին,
Կրկին իրար հետ մերվում ենք անհուն մեր հին կարոտով,
Դու հազարդարյա հավատքիդ ուժով, հմայքով վերին,
Ես մեր հնամյա ընկերությամբ ու մանկության սիրով:

Քո վաղնջական օրհնությունն եմ ես վայելում ահա,
Ու սոխակներն են նորից սաղմոսում քո զառ ափերին,
Իմ կարոտները միշտ գինովցած են թեզնով, Որոտան,
Դու արևահամ հույսի հնձանն ես ջահել օրերիս:

ԱՆԱՀԻՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Գորիս, Բանասպեղծին

ԱՐՁԱԳԱՆՔ

Տիգրա՜ն,
Քանքարավոր ա՛յր, Հաբանդա տնից,

Նվիրաբերումի ձոնագրով Քեզնից երեք սոփեր ստացա, որոնցով նորոգեցիր իմ նուրբ սերը Քո նկատմամբ: Տիգրանգրիգորյանական «Անմահության համանվագ» պոեմը հաստատեց-ամրացրեց ու զորացնում է գյուղական ուսուցչիս: Դա իմ հիմնն ու կերպն է, հայրենի հող ու ջրին սիրահարված յուրաքանչյուր սյունեցունը…

Ոգեւորված-խանդավառված եմ, որ Քո ոգեղենությամբ հայտնվել ես մեր ժամանակներում եւ այդպես կարոտաբաղձ միտված ես ապառնական ժամանակներին:

….Այժմ ընթերցում եմ բանաստեղծություններիդ ժողովածուն, բայց դեռ չեմ ավարտել. Հոգիդ՝ անքե՛ն լինի, հավատդ՝ շե՛ն լինի, կյանքդ՝ հորձանք (էջ 65):

Աղաչում եմ՝ առմիշտ եղիր բանաստեղծ եւ ընթերցողներիդ անդաստանում անտես մի արա տողացի ընթերցողիդ:

Մատչիմ ի համբույր՝
ՌՈԲԵՐՏ ԷՋԱՆԱՆՅԻ

1 օգոստոս 2013թ.

ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀՊՃՀ (պոլիտեխնիկ) Կապանի մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական անձնակազմը խորապես վշտացած է ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի հիմնադիր տնօրեն, տեղեկատվական տեխնոլոգիաների, ինֆորմատիկայի եւ ավտոմատացման համակարգերի ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Ալվարո Անտոնյանի անժամանակ մահվան կապակցությամբ եւ ցավակցում է նրա հարազատներին ու մերձավորներին:

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ Կապանի N6 դպրոցի 3-րդ բ դասարանի աշակերտները սրտանց շնորհավորում են դպրոցի ողջ ուսուցչական կոլեկտիվին, հատկապես պարապող ուսուցիչներին՝ ուսուցչի օրվա առթիվ, ցանկանում առողջություն, աշխատանքային հաջողություններ: Թո՛ղ միշտ նրանց կյանքի ուղեկիցը լինեն լավն ու բարին, գեղեցիկն ու առաքինին:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վարույթում է գտնվում քաղաքացիական գործն ըստ դիմումի Մերի Անդրանիկի Կիրակոսյանի՝ Անդրանիկ Կիրակոսի Կիրակոսյանին (ծնված՝ 1962թ., վերջին հայտնի բնակության վայրը՝ ք. Կապան, Դավիթ-Բեկ թաղամաս, 2-րդ շենք, բնակարան 9) անհայտ բացակայող ճանաչելու պահանջի մասին: Խնդրվում է բոլոր քաղաքացիներին եւ կազմակերպություններին Անդրանիկ Կիրակոսի Կիրակոսյանի վերաբերյալ հայտնի տեղեկությունները տրամադրել ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանին (հասցե՝ ք. Մեղրի, Զորավար Անդրանիկի 24/1, հեռ.՝ 0286-4-22-92):

ԿՈՐԵԼ է Սլավիկ Խաչատրյանի անձնական օգտագործման ավտոմեքենայի P403EX30RUS պետհամարանիշը: Գտնողին խնդրում ենք զանգահարել (077) 37 78 14 հեռախոսահամարով, փոխհատուցում երաշխավորում ենք:

Սյունյաց երկիր

ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ

Գլխավոր խմբագիր՝
ê²Øì°È²È°øê²ÜÚ²Ü

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63,
(091) 45 90 47,
(077) 06 28 02:
Էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«**ԳՈՎԱՋԴ - ԾԱՆՈՒՅՈՒՄ**» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 2000, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 04.10.2013թ.:

ՀՀ Սյունիքի մարզի «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն հայտարարում է մրցույթ՝ բժիշկ մանկաբարձ-գինեկոլոգի եւ ակնաբույժի թափուր պաշտոնների համար.

ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 10-ի թիվ 22 արձանագրային որոշման պահանջներով բաց մրցույթի մասնակից կարող է լինել ցանկացած անձ, ով կբավարարի ստորեւ նշված պայմաններին՝

- Բարձրագույն բժշկական եւ հետբուհական կրթության առկայություն՝ համապատասխան մասնագիտությամբ.
- Վերջին հինգ տարվա ընթացքում համապատասխան մասնագիտական կատարելագործման առկայություն, եթե մասնագիտացումն ավարտելուց անցել է առավել քան 5 տարի.
- Բժշկական էթիկայի կանոնների իմացություն:

Մրցույթին կարող է մասնակցել գրական հայերենին տիրապետող ՀՀ քաղաքացի, ինչպես նաեւ օտարերկրյա քաղաքացի, ով ունի կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ, աշխատանքի թույլտվություն եւ ում կրթական փաստաթղթերը սահմանված կարգով ճանաչվել են Հայաստանի Հանրապետության կողմից:

Թափուր տեղի հավակնորդների կողմից ներկայացվում է.

- դիմում (լրացվում է տեղում)
- մեկ լուսանկար 3x4 չափսի
- քաղվածք աշխատանքային գրքույկից
- ինքնակենսագրություն
- անձնագրի, բարձրագույն եւ հետբուհական կրթությունը հաստատող դիպլոմի եւ վերապատրաստման վկայականի պատճեններն ու բնօրինակները
- արական սեռի անձինք՝ նաեւ զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը
- նախորդ աշխատավայրից բնութագիր (եթե այդպիսին առկա է)
- օտարերկրյա քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ եւ աշխատանքի թույլտվություն:

Անհրաժեշտ փաստաթղթերը հանձնելուց հետո մրցույթի մասնակիցը կծանոթանա այն իրավական ակտերի ցանկին, որոնցից բաղկացած է լինելու հարցատոմսը:

Փաստաթղթերն ընդունվում են «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում, ամեն օր ժամը 10.00-16.00-ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերից (ՀՀ Սյունիքի մարզ, ք. Գորիս, Գ. Տաթեւացի 31, հեռ.՝ 0284 2-21-52): Մրցույթը տեղի կունենա «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում, 25.10.2013թ. ժամը 12.00-ին:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի աշխատանքային խմբին:

Միաժամանակ տեղեկացվում է, որ մրցույթին մասնակցելու համար քաղաքացիների ներկայացրած փաստաթղթերը հետ չեն վերադարձվում: